



## Խմբագրական

### ԱՒԱՐԱՅՐԷՆ ԱՐՅԱԽ ԵՒ ԱՆԿԷ ԱԼ ԱՆԴԻՆ



Հայոց պատմութեան տառապալից այլեւ լուսաւոր երթին մեջ, օղակ առ օղակ իրարու կ'ազուցուին անոր ոգիի շքեղ փայլատակումները, սկսեալ Հայկ Նահապետի արիաշունչ ազատամարտէն՝ ահեղ Բելին ընդդէմ, մինչեւ Կարմիր Վարդանի «ո՛չ»ը Յազկերտի խղճի բռնակալութեան, մեր քաջ Ֆետայիներու անձնուրաց ծառացումները յանուն հայուն կեանքին ու արժանապատուութեան, մինչեւ Սարդարապատեան հերոսներու համաժողովրդական գոյամարտը՝ հայուն եւ հայոց հայրենիքին լինելութեան ի խնդիր, մինչեւ Արցախեան հերոսամարտի աննկուն քաջերու սիրանքը ու կը հասնին մինչեւ Ապրիլեան քառօրեայ պատերազմը՝ հայ քաջագուն մարտիկներու ոգիի հրեղէն ժայթքումն ու անկէ ալ անդին...:

Ազգային-ազատագրական երթը հայուն դուլ ու դադար չունի, արդարեւ...Կը փոխուին պարագաներն ու ժամանակի պայմանները, նոյնը կը մնայ ազատաբաղձ եւ անկոտորում ոգին հայկական, որ լինել-չլինելու ճակատագրական պահերուն մասնաւորաբար՝ կը կանգնի խրոխտ ու վսեմ, իր լեռներուն նման ապառաժեայ եւ երկնասլաց, ու կը հաստատէ ու կը վերասահմանէ իր ազատ, ինքնուրոյն ապրելու իրաւունքը՝ իր բազմահազարամեայ բնօրրանին մէջ:

Պատմական այդ շքեղ փայլատակումներուն մէջ, կը շողշողայ անսուազ փայլով, Աւարայրի ոգին, ահա աւելի քան հազար հինգ հարիւր տարիէ ի վեր, կը ներշնչէ ու կը ոգեշնչէ իրերայաջորդ սերունդները Վարդանանց ոգիով, որոնք գիտցան իմացեալ մահով փրկել հայուն խղճի ազատութիւնը եւ սեփական դէմքով ու արժեհամակարգով ապրելու անկողոպտելի իրաւունքը...

Յազկերտի սպառնալից նամակին դիմաց, բնաբանի իմաստ ու արժէք ունի հայոց աւագանիին տուած պատասխանը, որ սոսկ կրօնքի պաշտպանութիւն չէ, այլեւ հայոց հաւատքի, խղճի ազատութեան ի պաշտպանութիւն ցուցաբերուած հզօր, անբեկանելի կեցուածք ու վճռականութիւն. «...Այս հաւատքէն ոչ ոք կրնայ զմեզ խախտել, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր եւ ո՛չ որեւէ դառն տանջանք...»:

Դարեր շարունակ, ամեն սերունդ նորովի կը մեկնաբանէ Վարդանանց խորհուրդը, նոր իմաստ կու տայ հայութեան ազգային-ազատագրական գոյերթին, յատկապէս



ճգնաժամային պահերուն, երբ վտանգուած է իր ազատ եւ արժանապատիւ ապրելու աստուածատուր իրաւունքը իր պապենական սրբազան հողին վրայ...

Դիպուկ են մեծ մտածող Կոստան Չարեանի անմահական խօսքերը. «Եթէ չենք անհետացել...որովհետեւ վտանգի ժամերին մենք վերագտել ենք մեր իսկութիւնը, մեր միութիւնը, մեր հոգեկան դէմքը...»:

Վարդանանց պաշտպանած եւ մեր իսկութիւնը կազմող մարդկային ու ազգային գերագոյն արժէքները՝ խղճի ազատութեան, հայրենասիրութեան, ազգային ինքնուրոյն գոյութեան իրաւունքի՝ մայրենի լեզուով, ազգային հաւատքով, արժէքային համակարգով ու մշակոյթով՝ դարերու քննութեան փորձը բռներ ու եկեր հասեր են մեզ՝ երրորդ հազարամեակի հայ նորահաս սերունդին մասնաւորաբար:

Մեր պատմութեան ներկայ պահը եւս ճգնաժամային է եւ վճռորոշ, քանզի հայութիւնն ու Հայաստանը կը գտնուին՝ դեմոկրատիայի եւ «մարդկային իրաւունք»ներու շպարով քողարկուած, բայց ըստ էութեան, համաշխարհային նոր բռնակալութեան դէմ յանդիման, ուր համաշխարհայնացումի համահարթեցումը ուրիշ բան չէ, եթէ ոչ երկիրներ ու ժողովուրդներ ենթարկել համաշխարհային օլիգարխիայի բռնապետութեան, ջնջելով զանոնք յատկանշող լեզու եւ մշակոյթ, պատմութիւն եւ հոգեմտաւոր արժէքային համակարգ...քաոսի վերածելով անոնց բնիկ օրրանները, անոնց հայրենիքները...: Նման բռնապետութենէն յաղթական կրնան դուրս գալ այն ազգերը, որոնք սթափ եւ զգօն ինքնագիտակցութեամբ տեր կը կանգնին իրենց ազգային լեզուին ու պատմութեան, իրենց դիմագիծը բնորոշող հոգեմտաւոր մշակոյթին, բարոյական արժէքներուն եւ դարերու քննութիւնը բռնած աւանդութեանց ու աշխարհահայեացքին...: Տեր կը կանգնին՝ իրենց պապենական բնօրրանին, որ սոսկ աշխարհագրական տարածք ու բնակավայր չէ, այլ ոգեղէն տարածք, անցեալի անջնջելի հետքերով, սրբազան խորհրդանիշներով, մեռելներու աճիւններով, ապագայի տեսլականով...

Հայութեան ու Հայաստանի համար, պատմութեան հրամայականն է այսօր նոր վերադարձը դէպի մեր ժողովուրդի բուն իսկութիւնը...: Այդ վերադարձը կ'ենթադրէ այսօր փնտռել ու յայտնաբերել մեր ներքին խոր ճշմարտութիւնը: Ինքնագիտակցութեան նոր որակի հրաւեր է ան: Մի նոր «Եղիցի՛ լոյս»ի կոչ ու կանչ, վերագտնելու հայութեան ու Հայաստանի անթեղուած, բայց միշտ առկայ ոգեղէն եւ լուսեղէն խորհուրդը...

Այդ խորագոյն ճշմարտութիւնը բարձր կ'աղաղակեր ասկէ ճիշդ երեսուն տարի առաջ, մեր նորօրեայ պատմութեան 1988-ի Արցախեան համաժողովրդական ոգիի հրեղէն ժայթքումի օրերուն՝ «Միացում» կարգախօսով, որ կը միաւորէր հայրենիքի ամբողջ բնակչութեան մէկ երրորդը կազմող մէկ միլիոն մարդ՝ խաղաղ ցոյցերով, այլեւ իր պատմութեան հզօր շունչն ու ոգին վերահաստատող կոչով...«Միացում»ի կոչը մէկ միասնական բռունցք դարձած համայն հայութեան կոչն էր վերատիրանալու բռնախլուած Արցախին եւ զայն միացնելու իր



մօր՝ Հայաստանին...: Պատմական հրեղէն պահ էր սա, ուր օղակ առ օղակ իրարու կ'ազուցուէին մեր բոլոր ազատամարտերը՝ Հայկ Նահապետի ազատամարտէն մինչեւ Աւարայր ու Սարդարապատ, ազգային-ազատագրական բոլոր շարժումները կու գային խտանալու տուեալ պահի խորին խորհուրդին մէջ, դարեր ու հազարանեակներ կը թանձրանային ազգային-հոգեւոր արթնացման այդ պահին մէջ, ըսելու համար որ հայութիւնը կայ ու պիտի ըլլայ իր բազմահազարամեայ բնօրրանին մէջ՝ իր բնիկ լեզուով, բարոյական, հոգեմտաւոր արժէքներու համակարգով, ուրոյն դիմագիծով եւ աշխարհայեացքով, իր աստուածատուր իրաւունքներով...ի կատար ածելու համար իր առաքելութիւնը եւ ըսելու իր սեփական խօսքը՝ աշխարհին:


Այսօր նոյն պատգամը կը հնչէ՝ Աւարայրէն մինչեւ 88-ի ոգեղէն հրաշքը, կը հնչէ որպէս նոր արթնացման հրաւեր, ազգային նոր ինքնագիտակցութեան կոչ, կը հնչէ որպէս նոր «Միացում»ի ղօղանջ, անդրանցելով աշխարհագրական, հատուածական եւ բազմատեսակ այլ տարանջատումները, միաւորուելու ու կեանքի կոչելու միացեալ, մէկ ամբողջական հայութեան գաղափարը, աշխարհով մէկ սփռուած հայութեան ամբողջականացումը, Հայքի կայացումը, յանուն նոր որակի Հայաստանի կայացման՝ ազգային, հոգեմտաւոր, մշակութային, բարոյական նոր վերածնունդով, հայ մարդու ոգիի եւ գիտակցութեան նոր զարթօնքով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Յօդուածներ

### Խճանկար՝ Նշմար

#### ՏԱՐԱՏՆԿԵԱԼ ԹՈՒՐՔԻՈՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ



#### ՍԱՍՈՒԷԼ ՅԱՆԹԻՆԿԹԸՆ

Իր "The Clash of Civilizations and the Remaking of World Order" խորագրեալ գիրքին մէջ, Թուրքիան բնութագրած է որպէս "torn country" (պատառոտած երկիր), իր բնակչութեան միատարր չըլլալուն հետեւանքով եւ տիրող թուրքերուն բնիկ չըլլալուն պատճառով:

#### ԹԱՆԵՐ ԱԲԶԱՄ

Իր վերջին հրապարակագրութեան մէջ գրեց հետեւեալը. «Յայոց Յեղասպանութիւնը Թուրքիոյ ինքնութեան կառոյցը ոչնչացնող պատմական փաստ է: Անմիատարր Թուրքիոյ մէջ՝ հասարակական խաղաղութիւն չի կրնար հաստատուիլ, եթէ Թուրքիոյ իշխանութիւնները մերժեն առերեսուիլ սեփական պատմութեան հետ եւ չուզեն հիմնել դեմոկրատական եւ մարդու իրաւունքները յարգող համակարգ մը»:

#### ՍՈՒԼԹԱՆ ԷՐՏՈՂԱՆ

Իր նոր-օսմանական օրակարգով երկփեղկում մը ստեղծեց նոյնիսկ՝ բուն թուրքերու ինքնութեան մէջ: Այսօր բուն թուրքերը կը տատանին երկու ինքնութիւններու միջեւ՝ ապակրօն, եւրոպական, քեմալական թրքութիւն, եւ իսլամական, օսմանական, Էրտողանական, կայսերական, փանթուրքական ինքնութիւն:

Այս երկրորդ օսմանական փանթուրքական ինքնութիւնը վերջերս դրսեւորուեցաւ հետեւեալ արարքով.

Ամբողջութեամբ քրտական ազգաբնակչութեամբ Չելթիքպաշը գիւղին (Քուրթուլան գաւառին) բոլոր բնակիչները ձերբակալուեցան հաւաքականօրէն: Ասիկա նոր-օսմանական, Էրտողանական, փանթուրքական Թուրքիոյ նորագոյն ցեղասպանութիւնն է՝ համաձայն Յեղասպանութեան Կանխարգիլման ու Պատժումին Միջազգային Պայմանակցութեան տրամադրութիւններուն (1948): Այսինքն՝ հաւաքականութեան մը նոյնիսկ մէկ խումբին դէմ գործադրուած հալածանքը համազօր է ցեղասպանութեան ոճիրի...:

#### ԲՆԻԿ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆՑ ՊԱՅՄԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

2007 թուին կնքուած այս պայմանակցութեան կիրարկութեան գլխաւոր դաշտերէն մէկն է տարատնկեալ Թուրքիան, որուն ամենահին բնիկ ժողովուրդն է Յայ ժողովուրդը: Եւ հայ բանաստեղծը գրեց.

Ես հայ եմ՝ հի՛ն, ինչպէս լեռնն այս Արարատի,



Թաց են ոտքերս դեռ Ջրհեղեղի ջրից.

Իմ սուրբ հողն է տեսել Նոյն առաջին անգամ,

Բաբելոնեան Բելը՝ խորտակուել է իմ սրից...:

Իսկ Թուրքիոյ բուն թուրքերը բնիկներն են Կեդրոնական Ասիոյ, ոչ Փոքր Ասիոյ, եւ անոնց երկու փեղկերէն Էրտողանականները՝ թող վերադառնան Կեդրոնական Ասիա...: Թեմալական փեղկի թուրքերը կրնան մնալ Փոքր Ասիոյ մէջ՝ եթէ անոր բնիկ ժողովուրդներուն հետ համախորհուրդ կազմեն՝ Փոքր Ասիոյ Բնիկ Ժողովուրդներու Սոցիալիստական Հանրապետութիւններու Համադաշնակցութիւն:

### ԷՐՆԵՍՏՕ ՉԷ ԿԵՎԱՐԱ

1965-ին, Լատին Ամերիկայի ժողովուրդներու ազգային եւ ընկերային ազատագրութեան համար նահատակուած Քոմանտանթէն՝ ՉԷ Կեվարա, Հաւանայի մէջ, երբ ներկայ եղած է հոն այցելած Արամ Խաչատրեանի «Սպարտակ» պալէի ներկայացման, ջերմօրէն շնորհաւորած է հայ մեծ երաժշտագետը, եւ ապա՝ մամլոյ ներկայացուցիչներուն յայտարարած է հետեւեալը. «Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը անմահ է. ան իր մէջ կը կրէ Հայ ժողովուրդի ոգին», եւ կը շեշտէ. «Հայ ժողովուրդի ՊԱՅՔԱՐԻ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԻՆ»...:

Սովետ Միութեան անդամ Հայկական ՍՍՀ-ի օրերուն, երբ Անաստաս Միկոյեան ալ նախագահն էր Սովետ Միութեան Գերագոյն Սովետին, նահատակ Քոմանտանթէի այս գնահատականները՝ Խաչատրեանի երաժշտութեան անմահութեան եւ հոն դրսեւորուող Հայ ժողովուրդի Պայքարի եւ Յաղթանակի Ոգիին մասին, վերջերս կարդացի լիբանանահայ մամուլին մէջ, եւ ցաւատանջ միեւնոյն հարցումը ցցուեցաւ միտքիս մէջ: Այս օրերուն, Արեւելահայաստանի նոր-ազատական, վայրի դրամատիրական համակարգին տակ Նօսրացող եւ անտարբերացող ժողովուրդի զանգուածին մէջ՝ կը տիրէ՝ արդեօք պայքարի եւ յաղթանակի ոգին: Պատասխանը գտայ՝ Հ1 կայանի կազմակերպած հարցախոյզին մէջ:

Հ1 կայանը՝ 100,000 քաղաքացիներէ պահանջած է յիշել իրենց ծանօթ հայ ականաւոր դէմքերու անունները: Անոնցմէ միայն 26 հազարը յիշածեն՝ Վարդան Մամիկոնեանը, միայն 8 հազարը՝ Տիգրան Մեծը, միայն 4 հազարը՝ Մեսրոպ Մաշտոցը, միայն 3 հազարը՝ Եղիշէ Չարենցը, միայն 2 հազարը՝ Գրիգոր Նարեկացին, միայն 1 հազարը՝ Արամ Խաչատրեանը... եւ՝ յիշատակելի ձայներ չեն առած՝ Չօր. Անդրանիկն ու Խրիմեան Հայրիկը... եւ՝ ոչ մէկ ձայն՝ Գրիգոր Լուսաւորիչը:

Այս անդունդային անկումը լախտի հարուածով անշարժացուց ուղեղս...: Այս խոր վիրապին իջած եւ նուաստացած ժողովուրդ մը չի կրնար ունենալ հայրենիքի պաշտպանութեան պայքարի եւ յաղթանակի ոգին...:

Հ1 կայանի հարցախոյզին այս ահազանգային արդիւնքին լոյսին տակ, կարելի՞ է հաւատալ, թէ՛ իր ժողովուրդի ազգային ու հոգեմտաւոր մշակոյթին մասին բաւարար ծանօթութիւն չունեցող ժողովուրդ մը կրնայ սիրել իր ժողովուրդն ու հայրենիքը, եւ՝ անոնց ազատութեան ու բարօրութեան համար ցուցաբերել պայքարի եւ յաղթանակի ոգին, մասնաւորաբար համակարգի մը մէջ՝ ուր ժողովրդասիրութիւնն ու մարդասիրութիւնը զոհուած են



դրամասիրութեան, եւ՝ անհատական, ոչ համայնական շահին: Որովհետեւ՝ իրաւ սիրոյ, իրաւ յանձնառութեան նախապայմանն է՝ ծանօթանալը, գիտնալը, ճանչնալը...: Եւ ուրեմն, Արեւելահայաստանի նոր-ազատական, վայրի դրամատիրական համակարգին իշխանաւորները՝ բաւարար չափով ծանօթ չեն հայ ժողովուրդի ազգային-քաղաքական եւ հոգեմտաւոր մշակոյթի պատմութեան, եւ իբր հետեւանք այս անգիտութեան, անոնք կրցան միայն կառուցել՝ ԴՐԱՄԻ յուշարձան Երեւանի սիրտին վրայ, քանի որ սոսկ մենաշնորհեալ դրամատերներ են, ոչ ժողովրդասէր, ոչ հայրենասէր, այլ՝ լոկ դրամասէր օլիգարխներ: Ասոնք չունին՝ պայքարի եւ յաղթանակի ոգին: Հրամայականն է՝ Արեւելահայաստանի ազատագրումը այս համակարգէն:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

29 Յունուար 2018

## Յօդուածներ

### ՁԻԹԵՆԻԻ ՉՈՐ ՃԻԻՂԸ...

### ՅԱԿՈՒՄ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Հալեպի հիւսիսային շրջանի հնավայրերը եւ անոնց շուրջի տարածքները ծածկուած են ձիթենիի պարտեզներով, որոնց արմատները կ'երկարին մինչեւ ասորական եւ փիւզանդական դարաշրջանները: Քրիստոնէութեան տարածումէն ետք յատկապէս, ձիթենիներու ծառատնկումը առաջնային պահանջք դարձաւ, որովհետեւ անոր պտուղներէն ձէթ կը քամէին եւ ձէթն ալ կ'օգտագործէին թէ՛ որպէս ուտեստ, թէ՛ որպէս եկեղեցական-ծիսական նիւթ եւ թէ՛ որպէս բուժիչ

դեղամիջոց զանազան հիւանդութիւններու պարագային:

Բոլոր անոնք, որոնք կ'այցելեն այդ շրջանները՝ Հալեպէն դէպի հիւսիս, 20 քմ ետք կը հանդիպին հնադարեան, այժմ «Շէյխ Սլէյման» կոչուած գիւղին, ուր կան 5-րդ եւ 7-րդ դարերէն մնացած երկու կիսափուկ, սակայն իրենց գեղեցկութիւնը պահպանած եկեղեցիներու եւ զինուորական դիտակետ աշտարակի մը, շրջապատուած ձիթենիի ծառաստաններով, որոնց մէջ համդիպած են հսկայ երկանաքարի մը, որ հաւանաբար օգտագործուած է ձիթահան հնձաններու համար:

Այդ հնավայրէն մինչեւ Աֆրին, ամէն քայլափոխի կարելի է հնութեան մը հանդիպիլ, իսկ դալարագեղ բլուրի մը վրայ թառած Սիմէոն Սիւնեկացիի 5-րդ դարու վանքային համալիրը իսկական հրաշակերտ կառոյց մըն է:

Այս վանքի յետսակողմէն մինչեւ Աֆրին ընդհանրապէս քրտաբնակ գիւղեր են, ուր իրենց իւրայատուկ մաքրութեամբ ու կոկիկութեամբ աչքի կ'իյնան ձիթաստաններն ու նռնաստանները:

Եթէ Այն Տարան (\*) նշանաւոր է երեքհազարամեայ իր հիթիթեան տաճարով, որ անցեալ դարուն ճափոնական հնագիտական արշաւախումբի մը տասնամեայ աշխատանքներով վերականգնեցաւ, ապա Պասութեան հռչակաւոր է իր համեղ, հիւրեղ նուռերով, որոնց մէկ հատը 700-800 կրամ կրնայ կշռել:

Այս երկու քրտաբնակ վայրերէն անցնելով կը հասնինք Աֆրինին, որ եթէ երէկ անձանօթ անուն մըն էր, այսօր միջազգային լրատուամիջոցներու գլխաւոր նիւթն է, թրքական յարձակման եւ սուրիական հողեր ներխուժման որպէս թիրախ եւ որուն գործողութիւնը,- ի՞նչ հեգնանք,- «Ձիթենիի ճիւղ» անունը կը կրէ:

Աֆրինէն 5 քմ դէպի հարաւ-արեւմուտք Մարաթա գիւղն է, նոյնպէս քրտաբնակ, որ մեր հռչակաւոր առակագիր Վարդան Այգեկցիի ծննդավայրը եղած է, տրուած ըլլալով որ այս շրջանը ժամանակին Կիլիկիոյ մաս կազմած է: Հայրենի հիւրերու (Մերուժան Տէր Գուլանեան, Սերօ Խանգաստեան) հետ քանիցս այցելած ենք ու ծերունագարդ քիւրտ



գիւղապետէն լսած ենք իր պապերէն իմացած «Վարդան Վարդանոս» անունը, որ 800 տարի առաջ եղած է այս գիւղին ամենանշանաւոր բնակիչը:

Ձիթենիի ճիւղը խաղաղութեան խորհրդանիշ է, մինչ Թուրքիոյ մենատերին համար երեւի ան ուրիշ իմաստ ունի:

Սուրիոյ հիւսիսային սահմանի գրեթէ ամբողջ երկայնքին քրտական բնակավայրեր են, որոնք Թուրքիոյ հարաւային սահմանը կը կազմեն եւ սպառնալիք են Թուրքիոյ, անկախ պետականութիւն, կամ գերիշխանութիւն ունենալու իրենց մեծ երազի ճամբուն վրայ, ատոր համար ալ Թուրքիա ձեռնարկեց այս յարձակումին, ոտնակոխ ընելով միջազգային օրէնքը՝ ներխուժելով ինքնիշխան պետութեան մը սահմաններէն ներս, իբր թէ պատժելու համար ԲԿԿ-ի (Քիւրտիստանի Աշխատաւորական կուսակցութեան) «ահաբեկիչներն» ու տակաւին այդ վայրերուն մէջ գտնուող ԻՊ-ի մնացորդացը:

Առանց քաղաքական ու ռազմական մեկնաբանութեանց ճահիճին մէջ իյնալու, ըսեմ որ այս շրջանները իրենց գեղատեսիլ վայրերով, իրենց անմրցելի ձեթի, ձիթապտուղի, նումի ու նռնահիւթի արտադրութեամբ, որոնք սուրիական արտադրութեանց հպարտութիւնը կը կազմեն, ոտնակոխ պիտի ըլլան ու աւերուին թրքական յարձակումին պատճառով: «Ձիթենիի ճիւղ»ով պատերազմ յայտարարողը պիտի աւերէ բազմահազար ձիթենիներու այգիները...

Սակայն, ինչո՞ւ զարմանալ, այս է Գորշ գայլին նկարագիրը այսպէս էր 1915-ին, այսպէս եղաւ 1974-ին Կիպրոս ներխուժման ատեն, ու այսպէս ալ պիտի ըլլայ հիմա:

Սուրիական հողերը կը վերածաղկին, սակայն թրքական ձիթենիի չոր ճիւղը չի դալարիր:

\*) Հեռատեսիլը հաղորդեց, որ այս տաճարը թիրախ դարձած է թրքական ռմբակոծումներուն:

Աղբիւր՝ ԱԶԳ թերթ



## Տեսակէտ

### ՍՈՒԼԹԱՆԻ ՄԸ ՈՒՐՈՒՄՄԱՆԸ՝

### ԱԹԱԹՈՒՐՔԱԿԷԶ ԷՐՏՈՂԱՆ

### ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



Չարաչար պարտուած ըլլալով Սուրիոյ դէմ իր շղթայագերծած՝ սուրիական նոր տարածքներ գաւթելու եւ Իսկէնտերունի գաւթումը մոռցնել տալու, նոր-օսմանեան պատերազմին մէջ, եւ՝ Սուրիոյ եւ Իրաքի դէմ վարձկան ամէն գոյնի օտար ահաբեկիչները հովանաւորելու իր միջազգային ոճրագործութեան մէջ, Էրտողան կը փորձէ՝ յամառօրէն ու պինդգլխութեամբ, իրականացնել իր նոր-օսմանիզմի քմշանկարը, եւ մի առ մի կ'այցելէ Օսմանեան Կայսրութեան նախկին գաղութները, յուսալով հողը պատրաստել, կամ աւելի ճիշդը, Թուրքիոյ բնակչութեան կլլեցնել, թէ՛ մօտալուտ է օսմանեան պետութեան վերականգնումը, Աթաթուրքի հիմնած փոքր, անդամահատուած հանրապետութեան յաջորդելու համար:

Էրտողանի այցելած վերջին երկիրները եղան՝ Երոպայի մէջ, Յունաստանը, իսկ Յիւսիսային Ափրիկէի մէջ՝ Սուտանը, Չատը եւ Թունիսը:

Եթէ նախկին գաղութներու ապազգային եւ հակաժողովրդական իշխանութիւնները, որոշ՝ գրպանի կամ աթոռի շահերով, կրնան «անյիշաչար»ութիւն կեղծել, այդ երկիրներու ժողովուրդներուն եւ ընդդիմադիր կուսակցութիւններուն պատմական յիշողութեան մէջ սակայն, դեռեւս վառ կը մնան օսմանեան բռնատիրական լուծին չարիքներն ու վնասները: Այսպէս, երբ Էրտողան 2017 թ. Դեկտեմբեր 23-ին Խարթում պիտի այցելէր, Սուտանի մեծագոյն ընդդիմադիր կուսակցութեան՝ «Ալ-Ումմա»ի փոխ-նախագահը՝ Մարիամ Ալ-Սատէք Ալ-Մէհտի, Էրտողանէն պահանջեց նախ ներողութիւն խնդրել Սուտանի ժողովուրդէն, օսմանեան լուծին պատճառած չարիքներուն եւ վնասներուն համար: Նախորդ օրը արդէն՝ Դեկտեմբեր 22-ին, Միացեալ Էմիրութիւններու արտգործնախարար Ապտալլա Պըն Չէյիտ, Թուրքիան ամբաստանած Էր Մուհամմետ մարգարէին ձեռագրերուն ու մասունքներուն գողութեամբ՝ Մետինէ սուրբ քաղաքէն, ձեռամբ՝ Մետինէի օսմանեան պահակագունդի հրամանատար Օման Ֆախրետտին Թիւրփաքան փաշայի... Երբ այս փաշան, 9 Յունուար 1919 թուին կը հեռանար ՍԷուտ Արաբիայէն, 1918 թ. Յոկտեմբեր 30-ի Մուտրոսի զինադարարի որոշումին համաձայն: Էրտողան հրահանգեց իրեն հիւր լրագրողներուն եւ պատմաբաններուն՝ հակադարձել Պըն Չէյիտի այս ծանրակշիռ ամբաստանութեան: Մի քանի տասնեակ գրիչներ գործադրեցին Էրտողանի հրահանգը: Եւ բոլորը՝ բացի մէկէն, հիմնուած էին այն սուտին վրայ, զոր սորված էին իրենց աշակերտական գրասեղաններուն վրայ, թէ՛ Ֆախրետտին փաշան այդ ձեռագրերն ու մասունքները ոչ թէ գողցած էր, այլ զանոնք փրկած՝ բրիտանացի զինուորներու բռնագրաւումէն... (Այս նոյն տրամաբանութեամբ ուրեմն, Երիտթուրքերը հայաստանութիւն գործեցին եւ Արեւմտահայաստանը գաւթեցին, Արեւմտահայութիւնը փրկելու համար ռուսական բռնագրաւումէն...): Էրտողան գոհացած էր այս հակադարձութենէն, քանի որ չէր



անդրադարձած, որ Մետինէի շուրջ պատերազմը տեղի կ'ունենար՝ երբ օսմանեան բանակը Մետինէի մէջ շրջապատուած էր ոչ թէ բրիտանական զօրքին, այլ՝ Շերիֆ Յիւսէյի յեղափոխականներուն կողմէ... (Ի դէպ, Էմիր Շերիֆ Յիւսէյն դատապարտեց՝ 1916 թուի իր շրջաբերականով, երիտօրորքերու ոճիրները հայոց դէմ, եւ բոլոր միւս Էմիրներուն թելադրեց հոգատար ըլլալ եւ տեր՝ «Յակոբեան Յայ» գաղթականներուն): Էրտողան չէր անդրադարձած նաեւ, որ երբ «Յիւրրիէթ»ի մէջ Ահմեդ Յաքան կը գրէ հետեւեալ շունչով գրութիւն մը. «Էմիրութիւններուն կողմէ ցուցաբերուած այս կեցուածքը՝ արաբներու կողմէ թուրքերը կռնակէն դաշունահարելու արարք մըն է...», կանխաւ խափանած կ'ըլլայ օսմանեան արաբական գաղութներուն վերադառնալու ամեն ուղի...: Ահմեդ Յաքան դպրոցէն սորված է, թէ արաբները Ա. Աշխարհամարտին, գործակցած են Բրիտանիոյ հետ եւ Թուրքիան դաշունահարած՝ կռնակէն: Ան նոյն դպրոցէն սորված է նաեւ, որ հայերն ալ գործակցած են Ռուսաստանի հետ եւ կռնակէն դաշունահարած են Թուրքիան, դաւաճանած են Թուրքիոյ: Թուրք ուսանողները չեն սորված, թէ հայերն ու արաբները տառապած են օսմանեան բռնատիրական լուծէն, ինչ որ բնական պիտի ըլլար որ անոնք գործակցէին օսմանեան պետութեան դէմ պատերազմող պետութիւններուն հետ: Եւ՝ երբ այսպիսի թշնամութեան քարոզչութիւնը կ'ընեն, իրենք վերածարձած կ'ըլլան թշնամութիւնը արաբ եւ թուրք ժողովուրդներուն միջեւ, եւ անկարելի դարձուցած կ'ըլլան նոր-օսմանիզմի ծրագրին գործադրութիւնը...: Եւ արդէն, հակառակ Էրտողանի թափած տոնքիշոթեան ճիգերուն, այսօր մեծապէս ձգտուած են Թուրքիոյ յարաբերութիւնները՝ Սուրիոյ, Իրաքի, Եգիպտոսի, Սեուտ Արաբիոյ, Էմիրութիւններուն, Լիպիոյ եւ նոյնիսկ Թունիսի հետ:

Թուրք հեղինակաւոր պատմաբան Շիւքրի Յանի-Օլլուն, նոյն «Յիւրրիէթ»ին մէջ գրեց. «Շատ մեծ քաղաքական սխալ մը կը գործեն անոնք, որոնք կը կարծեն, թէ Միջին Արեւելքի արաբները մոռցած են օսմանեան պետութեան բռնատիրութիւնը իրենց դէմ, նոյնիսկ՝ դար մը վերջ»: Արդեօք Յանի-Օլլուն կրնա՞յ հաւատալ, թէ մենք՝ արդէն դար մը վերջ, մոռնալու վրայ ենք Արեւմտահայաստանը... բանիւ եւ գործով... գիտութեամբ թէ անգիտութեամբ, մեղա՛յ... մեղա՛յ Արարատին:

Շիւքրի Յանի-Օլլուի մատնանշած ճշմարտութիւնը հաստատուեցաւ, երբ Էրտողան՝ Իսլամական Երկիրներու Յամագործակցութեան Միութեան նախագահի հանգամանքով, եւ՝ օգտագործելով Երուսաղէմը Սիոնիզմի տարատնկեալ պետութեան նուիրելու Թրամփի խոստումը, անոր դէմ՝ Իսթանպուլի մէջ, հրակիրեց արաբ-իսլամ երկիրներու գազաթաժողով մը, բարձրացնել կարծելով իր ժողովրդականութիւնը այդ երկիրներուն մօտ, յաչս Թրամփի, Եգիպտոսի եւ Սեուտ Արաբիոյ: Հրակիրուած 53 երկիրներէն միայն 17-ին պետերը ներկայ եղան. միւս 36-ին պետերը չհաւատացին Էրտողանի անկեղծութեան, եւ՝ բացակայեցան ժողովէն, քանի որ Թուրքիա իսլամ երկիրներէն միակն է, որ պորտակապով կապուած է սիոնական տարատնկուած պետութեան, եւ Էրտողան ոչ մէկ գործնական քայլ առաւ ԱՄՆ-ի եւ Իսրայելի նկատմամբ, խզելով իր դիւանագիտական կապերը անոնց հետ, կամ՝ սպառնալով վերջ ընել Թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի ռազմախարհիսններուն եւ Մալաթիոյ մէջ գործող իսրայելեան ռատարին...:

Բայց Տօն Քիշօթը (Էրտողան) կը շարունակէ իր նոր-օսմանիզմը իրականացնելու ծրագիրը, արհամարհելով ռուս-իրանեան ճնշումները՝ զինք տարհամոզելու, որպէսզի իրաժարի իր փայփայած երազէն: Ռուսիա եւ Իրան սխալա՞ծ են արդեօք, եւ Էրտողան իրաւացիօրէ՞ն գրաւ դրած է արաբներու դիմադրականութեան չգոյութեան, եւ՝ ռուս-իրանեան Թուրքիոյ հանդէպ ներկայի հանդուրժողութեան անսահմանութեան վրայ...: Արաբներու



դիմադրականութեան ցարդ բացակայութիւնը՝ տակաւին անոր չգոյութեան ապացոյց մը չէ: Իսկ ռուս-իրանեան ներկայի հանդուրժողականութիւնը անսահման չէ բնա՛ւ, այլ՝ պայմանաւոր եւ ժամանակաւոր միայն: Ռուս-իրանեան կողմին համար կարմիր գիծեր են՝ փանթուրքիզմը եւ նոր-օսմանիզմը: Միայն թե՛ Ռուսաստան կ'ուզէ զօրաւոր ներկայութիւն ունենալ ոչ միայն Սուրիոյ եւ Սուէզի մէջ, այլեւ՝ Կոստորի...: Եւ այս վերջինին դիմաց՝ Թուրքիա պայման ունի, եւ Հայաստան պարտաւոր է հաւատարիմ մնալու Ռուսաստանին, որպէսզի այդ պայմանը չհակասէ Հայաստանի շահերուն...:

Էրտողան վերջերս այցելեց Սուտան, Չատ եւ Թունիս, թրքական մահիկով պաշարելու համար Եգիպտոսն ու Սեուտ Արաբիան... որոնք իր մեծագոյն երկու մրցակիցներն են Սիւննիական Արաբ Աշխարհին մէջ:

Ան արդէն, օգտուելով Սեուտ Արաբիոյ եւ Էմիրութիւններու Զաթարի հանդէպ թշնամանքէն, Զաթարի մէջ հաստատեց թրքական ռազմախարհսիս մը՝ 3000 զինուորներով, եւ մօտերս հոն կ'աւարտէ գործարանի մը շինութիւնը՝ տեղւոյն վրայ ռազմական սարքեր արտադրելու համար:

Եւ Սուտան այցելութեամբ, 100 տարուան համար վարձու առաւ Սաուաքին կղզին, զայն նկատելով նախկին սեփականութիւնը օսմանեան պետութեան, շեշտելով թե՛ Սաուաքին կղզին ոչ Սուտանի կը պատկանի եւ ոչ ալ այլ արաբական պետութեան մը: Եւ հոն հաստատեց թրքական երկրորդ ռազմախարհսիս մըն ալ...:

Նախապէս արդէն, օգտագործելով Սոմալի տնտեսական սուր տագնապը, կաշառած էր Սոմալի իշխանութիւնը, եւ հոն հաստատած՝ թրքական 3-րդ ռազմախարհսիս մը՝ Կարմիր Ծովի ափին, սպառնալու համար Եգիպտոսի ազգային անվտանգութեան, ապահովելով նաեւ՝ ոչ միայն Չատի, այլեւ՝ նոյնիսկ Թունիսի գործակցութիւնը Թուրքիոյ հետ, մինչդեռ Թունիս նոր ազատագրուած էր օսմանեան ազդեցութենէն, մեկուսացնելով Իսլամ Եղբայրներու Ալ-Նահտա Կուսակցութեան իշխանութիւնը, որ իշխանութիւնը գրաւած էր ապակողմնորոշելով եւ շահագործելով «Արաբական Գարուն» յորջորջուած յեղաշրջումը, որուն ալիքը սկսած էր Թունիսէն... (Բայց արդէն՝ 1987-ին, երբ այս տողերուն հեղինակը Թունիսի մէջ կը մասնակցէր պաղեստինցի գրողներու եւ լրագրողներու 9-րդ համագումարին, մեծ զարմանքով զգացած էր օսմանիզմի եւ իսլամի զօրաւոր ազդեցութիւնը այս երկրին մէջ, քանի որ Թունիս, Հիւսիսային Ափրիկէի արաբ երկիրներէն այն մէկն էր, որ ունէր նաեւ՝ ազգայնական եւ սոցիալիստական ուղղուածութեամբ ազդեցիկ կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ, որոնց մեծագոյնն էր երկրի Աշխատաւորական Կազմակերպութիւններու Համադաշնակցութիւնը):

Միւս կողմէ, այսօր՝ Սինայի թերակղզիին մէջ շարունակուող ահաբեկչական գործողութիւնները ֆինանսաւորողն ու ղեկավարողը Էրտողանի Թուրքիան է՝ Եգիպտոսի դէմ: Իսկ Եթովպիան՝ «Վերածնունդ» կոչուած ջրամբարտակով արտայայտուած իր հակա-Եգիպտական թշնամանքով Նեղոսի ջուրերուն կապակցութեամբ, կը ղեկավարուի ոչ միայն Թուրքիոյ, այլեւ՝ Իսրայելի կողմէ, քանի որ Նեղոսի ջուրերուն աչք ունէր ՊԷՆ Կուրիոն՝ տասնամեակներ առաջ արդէն: Եւ՝ սիոնական դրօշի վերելի եւ վարի կապոյտ գիծերը կը խորհրդանշեն Նեղոսի եւ Եփրատի գետերը, եւ՝ Իսրայելի քնեսէթի ճակտին գրուած է. «Հայրենիքդ կը տարածուի Նեղոսէն մինչեւ Եփրատ»: Այս նշանաբանին հեղինակն է ՊԷՆ Կուրիոն՝ 1948 թուականին, երբ ըսաւ. «Իսրայելի ապագան երաշխաւորելու համար մենք



պետք է տիրապետենք Նեղոսի եւ Եփրատի ջուրերուն»: Եւ՝ սիոնափանթուրքական շահերուն միջեւ պորտակապը կ'երեւի բազմակի երեսակներով...:

Միջանկեալ, հարկ է վերյիշեցնել, թէ՛ Թուրքիոյ պետութիւնը, Իսրայէլի եւ ԱՄՆ-ի նման, տարատնկեալ պետութիւն մըն է: Այս երեքը հիմնուած են իրենց գրաւած երկիրներուն բնիկ ժողովուրդներուն արեան ու գանկերուն վրայ, եւ անոնց միջեւ ապահարգանք անկարելիութիւն մըն է: Անոնք պարտաւոր են իրարու կողքին կենալ, երբ իրենցմէ մէկը դատապարտուի իր տարատնկեալ ըլլալուն համար: Միաժամանակ՝ այս երեքին մեծագոյն սպառնալիքը իրարու այն է, թէ պիտի խօսին միւսին տարատնկեալ ըլլալուն, բնիկ ժողովուրդը ցեղասպանած ըլլալուն մասին: Սիոնական պետութիւնը եւ ԱՄՆ մինչեւ օրս կը մերժեն ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը Թուրքիոյ ձեռամբ՝ ինչ վեճ ալ ունենան անոր հետ:

28 Յունիս 2016 թուին, Էրտողան Իսրայէլի հետ ստորագրեց բարեկամութեան նոր համաձայնագիր մը՝ Երուսաղէմի մէջ, եւ ոչ թէ Թել Ավիվ... (փաստաթուղթին մէջ, որպէս վայր յիշուած է Երուսաղէմը): TRT-ի վրայ մրցութեան մը մէջ, Իսրայէլի մայրաքաղաքը ո՞րն է հարցումին, ճիշդ պատասխան նկատուեցաւ Երուսաղէմը: Էրտողան միակ պետն է իսլամ երկիրներու պետերուն մէջէն, որ արժանացած է՝ ԱՄՆ-իմէջ սիոնական լրպայի կողմէ, քաջութեան շքանշանին, որ «Դաւիթի Աստղ»ն է: Նախագահ Ապտալլա Կիլի օրով, երբ Էրտողան վարչապետ էր, Թուրքիա իսլամական միակ երկիրն էր, որ 2007 թուին արտօնեց Շիմոն Փերեզին ճառախօսել Թուրքիոյ խորհրդարանին մէջ: Թրամփի, Էրտողանի եւ Իսրայէլի միջեւ տարակարծութիւնները միայն երկրորդական եւ ժամանակաւոր կ'ըլլան...: Այս երեքին անսուրբ դաշինքը վերջ կրնայ գտնել միայն ու միայն, երբ ԱՄՆ հրաժարի իմփերիալիզմէն, Թուրքիա հրաժարի փանթուրքիզմէն եւ նոր-օսմանիզմէն, իսկ Հրեութիւնը հրաժարի սիոնիզմէն...:

Տակաւին, Օսմանեան Կայսրութեան նախկին սահմաններու վերականգնումին մոլուցքով յղիացած Էրտողան կը փորձէ նոյնիսկ վերադառնալ Եւրոպայի մէջ օսմանեան գաղութներուն:

Անոր այցելութիւնը Յունաստան՝ այս նպատակը կը հետապնդէր, պահանջելով վերատեսութեան ենթարկել Լոզանի Դաշնագիրը (1923 թ.), Յունաստան-Թուրքիա սահմանին կապակցութեամբ: Միջազգային դէտեր եւ վերլուծաբաններ միանշանակ մեկնաբանութիւն չտուին Էրտողանի այս անսպասելի պահանջին: Եթէ ոմանք Տօնքիշօթեան որակեցին զայն, ուրիշներ ալ պնդեցին Էրտողանի հաւանական վախին վրայ, թէ՛ միաբեւեռ աշխարհակարգէն բազմաբեւեռի անցումի ներկայ սրարշաւ ընթացքը կրնայ նաեւ յանգիլ՝ ոչ միայն Սելրի վերակենդանացման, այլեւ՝ նոր Լոզանի մը, նոր տարանջատում մը պարտադրելու համար օսմանեան պետութեան շարունակութիւնը եղող Արդի Թուրքիոյ տարածքին, քանի որ Լոզանը անտեսած էր Սելրի այն յօդուածները, որոնք կը վերաբերէին Զիւրտիստանի (Յօդ. 62-րդ, 63-րդ եւ 64-րդ) եւ Հայաստանի (Յօդ. 88-րդ, 89-րդ եւ 90-րդ):

Մուսթաֆա Աթաթուրք, Լոզանը նպաստաւոր համարած էր թուրքերուն համար, քանի որ ան ոչ միայն գոհ էր որ Լոզան անտեսած էր Զիւրտիստանը եւ Հայաստանը, այլեւ՝ ինք հրաժարած էր իսլամէն եւ օսմանիզմէն (կայսրութեան ծրագրէն): Էրտողան այսօր՝ Լոզանը աննպաստ կը համարէ Թուրքիոյ համար, եւ չի հրաժարիր իսլամէն եւ կայսրութենէն: Ան կը հետապնդէ նոր-օսմանիզմի ծրագիր, որպէսզի Լոզանի եւ Արդի Թուրքիոյ դարադարձին



(2023 թ.) կարողանայ պահանջել «Օսմանեան Կայսրութեան հողային ամբողջականութեան սկզբունքին գործադրութիւնը...»: Երտողանի այս երազը իրականանալու յոյսի կշռոյն անգամ չունի, քանի որ ասոր դէմ են ոչ միայն Ռուսաստանը՝ առաջին հերթին, այլեւ՝ ԱՄՆ-ը, Եւրոպան, Արաբ-Իսլամ Աշխարհը, եւ BRICS-ի միւս երկիրները: Բայց Երտողան, իր ղեկավարած Թուրքիան կ'ուզէ սեպել օսմանեան պետութիւն, որուն շառաւիղն է ինք. այդպիսով կարծելով, թէ՛ կրնայ խափանել Սեւրի վերակենդանացումն ու նոր Լոզանի մը գոյառումը, պահանջելով նոյն ատեն Լոզանի վերատեսութիւնը՝ ի նպաստ իրեն, եւ յոռեգոյն պարագային, այս հմայիլով կը յուսայ վերաշահիլ Ժողովրդականութիւն՝ ներքին ճակատին վրայ, եւ հաստատել սուլթանական միապետական բռնատիրութիւն, մոռցնել տալու համար Մուրթաֆա Աթաթուրքի կիզիչ յիշատակը...:

Բայց մեզի համար ցաւատանջ հարցումը այն է, թէ՛ ի՞նչ կ'ընէ Զայութիւնը Երտողանի վախին ի տես: Ի՞նչ կ'ընէ Զայութիւնը՝ Սեւրի վերակենդանացման եւ նախագահ Ուիլսոնի իրաւարար վճիռին գործադրութեան համար:

Պէյրուզ

1 Յունուար 2018

## Տեսակէտ

### ԴԻՄԱԻՈՐԵԼ 100-ԱՄԵԱԿԸ- Ոգեկոչումը կ'ունենայ միասնութեան խորքային եւ ոգեկան ներուժ

#### Յակոբ Պալեան



Աղմուկ-հրավառութիւնները եւ մարդորսական յարդի բոցերը պէտք չէ մոռցնեն հայրենիքին եւ ազգին ինքնուրոյն բովանդակութիւն եւ դեմք տուող հարցերը, որոնք ֆրանսագին կ'ընեն ֆրանսացի, արաբը՝ արաբ, յոյնը՝ յոյն, ճափոնցին՝ ճափոնցի, եւ հայը՝ հայ:

Այդ հարցերը, բոլորի պարագային, ընդհանուր բնորոշումով, մշակութային են,

հետաքրքրասիրութիւն-լուսանկար-մշակութասիրութենէ տարբեր որակ ունին, պէտք է ունենան, որոնք կու գան դարերու խորքէն, կը կրկնուին, կը ներշնչեն, ինչպէս պատմութիւն խտացուցած առասպելները, որոնց մէջ ժողովուրդները կը հաղորդուին նախահայրերով եւ իրենք զիրենք կը տեսնեն: Այդպէս են ֆրանսացիներու Վերժեթորիքսը, Վիքթոր Զիլկոյի «Դարերու Առասպելը» բանաստեղծութիւններուն մէջ երեւցող Ռուանը եւ Էմերիօն, մեր հուր հեր ունեցող Վահագնը, Սասունցի Դաւիթը, որոնց մէջ հայը կը սիրէ ինքզինք տեսնել, անկումներէն դուրս գալու համար:

Մշակութային ժառանգութիւն, որ ոչ միայն կը պառկի թանգարաններու կամ մատենադարաններու մէջ, այլ նաեւ մեզմէ իւրաքանչիւրին մէջ, որպէսզի պահենք, պահուի, մեր ինքնուրոյնութիւնը. Բերդեր, հնութիւններ, կոթողներ, մատեաններ: Բայց պարզագոյն ողջախոհութիւնը կ'ըսէ, որ մեր ինքնուրոյն դեմքը պահած է եւ դեռ կը պահէ մեզ միացնող լեզուն: Ան մեզի հետ փոխադրուող անզանցառելի վահանն է, երբ խորշակներ անցած են, երբ տիրապետուած ենք, երբ տարտղնուած ենք: Մենք մեզ հարազատութեամբ զգալու համար ամեակներու մէջ, պատմութեան այս կամ այն դրուագի ամեակը երբ կը տօնախմբենք, յիշատակներու հետ երբ պիտի խօսինք եւ անոնցմով պիտի հպարտանանք, ըսելու համար որ կանք, պիտի խորհի՞նք, թէ ո՞ր կամ ինչպիսի՞ դեմքով եւ հարազատութեամբ կանք որպէս շարունակութիւն:

Անկախ Զանրապետութիւնը (հարիւրամեակ), որպէս ազգի այսօրուան եւ վաղուան իրականութիւն, տոկայ եւ տեւէ, պիտի ամրացնէ իր ինքնուրոյնութեան դեմքը, որ ազգային լեզուն է: Այդ ամրացման համար համազգային եւ հեռանկարային վերաբերում պէտք է ունենայ, արմատներուն հաւատարմութեամբ, տոկալու եւ տեւելու կամքով, առանց իմաստութիւն համարուող պատշաճեցումներու, որոնք նահանջ են եւ կ'առաջնորդեն պատմութեան բեմէն անհետացման: Ո՞վ չի գիտեր, որ հայ համարուած անորոշ եւ տարտղնուած զանգուածներուն համար, պէտք է անվարան ըսել, Զայաստան եւ Սփիւռք(ներ), հայոց ազգային լեզուն դադրած է առաջնահերթութիւն ըլլալէ, մեր



ապիկարութեամբ: Լեզուի կորուստով ինքնութիւնը կը կորսուի, նոր ինքնութիւններ ծնունդ կ'առնեն, որոնք ժամանակ մը հայկական հետաքրքրութիւններ կ'ունենան:

Բազմաթիւ ժողովներէ, գիտաժողովներէ, ուսումնասիրութիւններէ ետք, կրնա՞նք ըսել, թէ հայ ազգ ընդհանոր բնորոշման տակ ընդունուող խմբաւորումներու ո՞ր տոկոսը ազգային ինքնութիւն կը պահէ լեզուով եւ մշակոյթով, հարազատ շարունակութիւն ըլլալով: Զարիւրամեակը պիտի յատկանշուի՞ ազգային լեզուի եւ մշակոյթի տիրութեան քաղաքականութեան մը մշակումով, որպէսզի ըսենք, թէ դար մը կամ երկու դար ետք, պիտի տոկանք եւ տեւենք մեր ինքնութեամբ: Ինչպէս յաճախ ըսած եմ, որ եթէ բոլոր հայերը օր մը դառնան սփիւռք, Զայաստանը դատարկուի, ինչ մարդիկ պիտի բնակին, թերեւս երկիրն ալ շարունակէ կոչուիլ Զայաստան, որպէս աշխարհագրական բացատրութիւն, ան հայու հայրենիք պիտի չըլլայ, ինչ հայ ազգ պիտի չմնայ: Սփիւռք(ներ)ը ազգ չէ, գաղթականութիւն է կամ համայնք, որ վաղ թէ ուշ պիտի կորսնցնէ լեզուն, քանի որ այդ լեզուն դատապարտուած պիտի ըլլայ կեանքի լեզու չըլլալով: Զայերէնը կեանքի լեզու կրնայ ըլլալ միայն Զայաստանի մէջ: Թէեւ սփիւռքները, սիզիֆեան յամառութեամբ, այդ ճիգը պէտք է ընեն, սպասելով միացումները:

Զարիւրամեակի մեծ տօնին առիթով, ղեկավարութիւնները պիտի ուզե՞ն եւ պիտի կարենա՞ն պատմութեան չար արկածներուն հետեւանքով նաեւ մեր հատուած լեզուն վերականգնել, որպէսզի յաղթահարուին նաեւ մեր անցեալը եւ մեզ իրարմէ հեռացնող փշաթելերը: Երկու խնդիր ունինք լուծելիք, որպէսզի Անկախութեան Տօնը իմաստաւորուի հարազատութեամբ. վերականգնել ուղղագրութիւնը եւ զտել լեզուն օտարացման հետեւող այլասերումէ:

Երկու պարագաներուն ալ ազգային եւ ոչ-փերեզակային (պագարային) վերաբերում պէտք է ունենալ: Լեզուն շապիկ կամ տաբատ չէ, որ մկրատով պատշաճեցուի իւրաքանչիւրին: Ան կանոնագրուած է օրէնքով եւ պատմական արմատներ ունեցող փորձով: Մեր ձեռագիրներէն միւսընչէն այսօր տեւած-ժառանգուած բառերուն տեսքը եւ ուղղագրութիւնը հարկ է վերականգնել, եւ այդ այդ համարել ազգային գաղափարախօսութեան հիմնաքարերէն մին, գիտնալով հանդերձ որ դժուարութիւններու պիտի հանդիպինք, սերունդներու տեսածին եւ սորվածին, տպագրուած հսկայական ժառանգութեան պիտի բախինք: Այս պիտի ըլլայ նաեւ մեր վերականգնումի յեղափոխութեան մէկ կարեւոր իրադարձութիւնը, մենք մեզի դէմ յաղթանակ տանելով: Ֆրանսացին կամ գերմանացին, ըստ անհատներու կամ քաղաքական իշխանութիւններու նախասիրութիւններու, լեզու չէ փոխած, չի փոխեր: Ազգային վերականգնումի ընդհանուր ծիրէն ներս, ուղղագրութեան հարազատութեան վերադարձը պէտք է համարել հիմնական առաջադրանք, անցեալի, այսօրուան եւ վաղուան միասնութեան համար:

Զարկ է վերականգնել լեզուն, մեկնելով ազգային գիտակցութեան այն հզօր յանդակութենէն, որ հայերէնը հարուստ լեզու է, ունի բոլոր տուեալները արդիական լեզու դառնալու, միաժամանակ ընդունելով, որ հայերէնը այս կամ այն լեզուին պէտք չունի ինքզինք լրացնելու համար, մերժելով այն տնանկի հոգեբանութիւնը, որ հարստացման համար մուրացածոյ բառերու եւ ասութիւններու կարիք ունինք:

Զայաստանի վերանկախացման տարիներուն, երբ դեռ երկիրը կը տքար ահեղ երկրաշարժի բեռն տակ, Երեւան կրպակներ կային, որոնց վրայ կը կարդայինք «քումփիւթըր»: Քանի մը





տարի վերջ յուզումով կարդացի, որ այդ բառը փոխարինուած էր համակարգիչով, ինչպէս որ փոխարինուեցան պրեզիտենդը, պարլամենտը, եղան նախագահ եւ ազգային ժողով, բայց հազարաւոր օտար բառեր դեռ կը տեսնեմ, կարծեք վերջնական կերպով սիրըզըն (քաղաքացի-խմբ.) եղած են: Բառերու եւ եզրերու հայացումը եւս պետք է արձանագրել ազգային քաղաքականութեան հետեւելիք օրակարգին վրայ: Ոչ ոք կը զարմանայ, կարդալով մեծ պաստառ մը, որուն վրայ գրուած կ'ըլլայ բորսա, երբ քանի մը անգամ կրկնելով կը սորվինք սակարանը:

Այս խնդիրները, իրենց կարգին, արժանի չէ՞ն նախագահական, պետական, կառավարական յանձնաժողովի մը, ուրիշներու շարքին, մեկնելով ապագայի տեսիլքէ, եւ ոչ անմիջական ներկայի մէջ դիրքերու պաշտպանութենէ, կամ ամբոխային ծուլութեան բաւարարութիւն տալէ, որ դժուար կը գտնէ փոփոխութիւնը, կամ նիւթապէս ծախսալից եւ անկարելի:

Գիտենք, որ աշխարհի մէջ, լեզուագետներու եւ պատմաբաններու կողմէ եբրայերէնը դասուած էր մեռեալ լեզուներու շարքին: Ի՞նչ է պատկերը այսօր. Եբրայերէնը հռչակուած է պետական լեզու: Երեւակայեցէ՛ք որ մեր գրաբարի մասին խօսուի որպէս պետական լեզուի... Անոր համար պայքարող տասը հոգի անգամ կարելի չ'ըլլար գտնել:

Երբեք բաւարար չափով չենք ընդգծեր, որ հիւլովուած եւ ցանկացուած միասնութեան համար անշրջանցելի ազդակ է հայերէնը: Հայ ազգը Բաբելոնի Աշտարակի համայնք չէ: Հայերէնը երբ կը դադրի ազգի անդամներուն միջեւ հաղորդակցական լեզու ըլլալէ, կը կորսուի ոգեկանութիւնը, քանի որ կը խորթանանք հայ գրականութեան, հայ բանաստեղծութեան, հայ երգին եւ հայերէն աղօթքին նկատմամբ: Հաւաքականութիւնները կը դադրին գիրար գտնելէ հայերէն բառով, գիրով եւ խօսքով փոխանցուած-փոխանցուելիք ժառանգութեան ոլորտին մէջ, այսինքն՝ հասարակաց ինքնութիւն չենք ունենար: Եթէ ազգի գրականութիւնը ազգի հոգեխառնութիւն է, տաղանդի արտայայտութիւն, առանց լեզուի անհաղորդ պիտի մնանք, հետեւաբար միասնութիւնը՝ պակասաւոր: Պարզ չէ՞, որ ազգի անդամները իրարու հետ հաղորդակցութեան մէջ կ'ըլլան, հիները եւ նորերը, իրենց իմացական արտայայտութիւններու ժառանգութեամբ:

Ֆրանսացիին, անգլիացիին, չինացիին կարդացէք Նարեկ, Թեքէեան, Չարենց, Մուշեղ Իշխան: Պիտի սիրեն թերեւս գեղեցիկ խօսքը: Ոչ քարայր եկեղեցին, ոչ լեզու-տունը եւ ոչ ալ հայ տան սեւցած պատերը պիտի խօսին իրենց: Հայկական լիարժէք միասնութիւնը կ'ապրուի հայերէնով: Օտարաբարբառ միասնութեան որոնումը կը նմանի վարձու սենեակի մէջ հանգչելու: Հետեւաբար լեզուի պահպանումը իր ինքնուրոյն ներքին հանճարով, գոյատեւման եւ միասնութեան ազդակ է: Այս ազգային իսկական իմաստութիւն է, զոր հարկ է փոխանցել իւրաքանչիւր հայու, Քամչաթքայէն Եյֆելի աշտարակ: Մեր ազգային ցանկութիւնները եւ երազները բան մը կը կորսնցնեն իրենց ոգեկանութենէն, երբ կը բացակայի լեզուն, կը սկսինք ուրիշի պարտեզներէն քաղելու գաղափարները:

Այս մտածումները չեն միտիր բարոյախօսութիւն ընելու, այլ ճամբայ հարթելու եւ գօտեպնդուելու վերականգնումի մնայուն պայքարին համար, որպէսզի հայը տեր դառնայ իր իրաւունքին, հողին, ինքնութեան եւ ճակատագիրին:

Այս պայքարը կը մղուի հաւաքական ճիգով, բայց նաեւ անհատական հաւատարմութեամբ՝ անշրջանցելի հայերէնով եւ անով հասած ժառանգութեամբ:





---

Անկախութիւնը քաղաքական եւ գիտակցական յանձնառութիւն է, որ երբ հետեւողական է, ինքզինք պիտի լրացնէ լեզուամշակութային անկախութեամբ, այլապէս կը կորսուի հոգեկան միջուկը, ազգը կը դառնայ ամբոխ:

6 Յունուար 2018,

Նուազի-ը-Կրան



## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՄՊԻՏԱԿ ԿԱՅԾԵՐ..

Փաթիլ-փաթիլ ճիշդ ձիւնի պէս  
Յեզի՛կ, մեղմի՛ւ իջաք գլխուս  
Վարսերուս մէջ կրակ ու հուր  
Իմաստութեան սպիտակ կայծեր...  
Թելի՛կ-թելի՛կ յայտնուեցաք  
Գգուանքովը ժամանակի  
Որ իր անխախտ օրէնքն ունի  
Ձերթ եղանակներն բնութեան...  
Ձեզ փայփայեմ ձիւնէ կայծեր  
Վառ գարուններ կ'ապրին ձեր մէջ  
Ամառներ թե՛ծ ու բոցակէզ  
Յուրհրատող վառ աշուններ...  
Տառապանքիս բովէն անցած  
Արեգակներ լուսամբարած  
Դուք հրա՛ջք էք ցոլքով ձմռան  
Խոհակալած, իմաստնացած  
Օրհնութի՛ւն էք լուսածորան...Ե.Գ.

.....



---

## ՏՈՒՐ ԻՆՁ, ԺԱՄԱՆԱԿ

Տո՛ւր ինձ, ժամանակ, կամքդ աներեր

Յոսելու անկանգ եւ չհատնելու

Անցեալն ու ներկան իրար կապելու

Օղակ առ օղակ շղթայի մը պէս...

Տո՛ւր ինձ, ժամանակ, իմաստութիւնդ

Դարէ-դար դիզուող համբերութիւնդ

Որով կը ջոկես ոսկին թիթեղէն

Յրեղէն խօսքերը՝ պարապ փրփուրէն...

Տո՛ւր ինձ, ժամանակ, անաչառ միտքդ

Որով կը կշռես մարդոց արարքներն

Եւ կը դասդասես, կը կշռադատես

Մայրուկը զատես զայրուկն արժէքէն...

Տո՛ւր ինձ, ժամանակ, որ քեզ պէս ես ալ

Ըլլամ անսկիզբ եւ յաւերժագնայ

Ըլլամ առեղծուած մը անլուծելի

Խորհուրդ մը խորին, անիմանալի...Ե.Գ

.....

## ՁԵՉՄՈՎ ՀՄԱՅՈՒՄԾ

Լուսածորան, ոսկեծորան առաւօտներ

Սիրածորան, հրածորան իմ կեսօրներ

Վարդածորան, խոհածորան երեկոներ

Յուսածորան, աստղածորան իմ գիշերներ

Յոգիս ձեզմով մնաց հմայուած ու լիացած

Ձեր դիւթանքով մնաց արբշիռ ու կենսավառ



---

Ձեզմով լեցուած, ձեզի կարօտ մնաց յաւէտ  
Ձեր խորհուրդով զմայլեցաւ երագահեւ...  
Ու թէ օր մը հոգիս հրաժեշտ առնէ ձեզմէ  
Դուք ձեր լոյսով պիտ' հեղեղէք զայն մշտապէս  
Երանգ-երանգ գունաւորէք ու ծիածանէք  
Ձերթ աստղերը երկնի ճակտին ջահաւորէք...Ե.Գ.

.....

### ՏԱՂԵՐ, ԳԻՐԵՐ

Տաղեր, գիրեր իմ սրտաբուխ  
Չաւակներն էք մտքիս, հոգւոյս  
Ձեզմէ ոմանց բախտն ժպտեցաւ  
Գորովանքի արժանացաք...  
Ուրիշներ կան որք լքուեցան  
Շող մը գգուանք չտեսան բնաւ  
Նայուածքի լոյսն չկաթեցաւ  
Չատ-հատ շարուած բառերուն վրայ...  
Ես բոլորիդ իմ սիրտէս՝ սիրտ  
Չոգիէս՝ հոգի տուի անգին  
Չեւքեր ունիք բոլորդ ալ  
Շունչէս իմ բորբ ու շողակաթ..  
Յանցանքն ի՞մս է, եթէ ձեզմէ  
Միայն ոմանց դպաւ գգուանքն  
Սեր-համբոյրը օրհնութեան պէս...Ե.Գ.

.....

### ՄՐՏԻՍ ԽՈՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ...

Սրտիս խորանին առջեւ ծնրադիր  
Բիւր երախտիքով է սիրտս յորդուն  
Տարի մըն ալ, Տէր, ինձ պարգեւեցիր



---

Խոկումներով լի, յոյզերով ցնծուն...

Կեանքիդ պարզեւած բերկրանքով լեցուն

Ինչ մտքի կայծեր փայլատակեցին

Յոգւոյս երկնքին, բիւր խոհեր բեղուն

Չորս ընծայեցի ընթերցողներու...

Կեանքիդ պարզեւած խորհուրդով արբշիռ

Ի՛նչ ի՛նչ երազներ հիւսեցի ինդուն

Յոգիս սլացք առաւ եթերին մէջ լոյս

Գրկեց արշալոյսն սիրով տարփագին...

Դուն ընծայեցիր լոյսդ հրեղէն

Որ դարձաւ ինձ լոյս սրտի եւ մտաց

Յոգւոյս երկնքին մէջ ան ցայտեցաւ

Պայթեցաւ ինչպէս կայծը լուսեղէն...

Թող լոյսդ անքնին միշտ հրացայտ

Տէ՛ր, կ'աղաչեմ քեզ, թող զիս չլքէ

Անով եմ բերկրուն, անով եմ հարուստ

Ճաճանչներուդ, Տէ՛ր, արժանի դարձուր...Ե.Գ.

.....

ԿԵԱՆՔԻՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Գարուններս եկան անցան

Չմրուխտ-զմրուխտ դաշտերուն մէջ

Թռվոռալէն, շորորալէն

Սահեցան զերթ մի ակնթարթ

Ակնթարթին հեւքը մնաց



---

Սրտիս ծալ-ծալ շերտերուն տակ...

Ամառներս արեւակէզ

Չիս այրեցին սիրով հրկէզ

Յուրքերէն այդ բոց մը մնաց

Սրտիս տաք-տաք քուրային մէջ

Շող մը առկայծ որ բոցկլտայ

Եւ չի թողուր որ ծերանամ...

Աշուններս ինձ հետ մնացին

Ոսկի եւ հուր տերեւներով

Ամէն մէկը սիրոյ մի տող

Մեղեդիով մը հոգեթով

Չոր փայփայեմ ես սրտագին

Սիրալոյսն ես իմ հոգիիս...

Ձմեռներս թէ որ հասնին

Սիրոյ անչափ պաշար ունիմ

Խարոյկին մէջ իմ բորբ սրտիս

Որ ոչ մէկ ցուրտ, սառնամանիք

Յրտահարել կը կարենայ

Յոգիս իմ վառ եւ հուրհրան..Ե.Գ.

.....

Կ'ԱՆՁՐԵԻԷ ՅՈՒՇԻԿ

Կ'անձրեւէ յուշիկ, կ'անձրեւէ մեղմիւ

Մեղեդի է հին, կանչով կարօտի

Թաց ես աչքերն երկկին տրտմագին

Թաց է ապակին հոգւոյս տաճարին...



Մաքուր արտասուք մաղուի երկինքէն  
Որ լուայ մարդոց բիւրաւոր մեղքերն  
Լուսաշիթեր են, կ'իջնեն մաքրաջինջ  
Որոնք կը բերեն համը երկնքի...

Յոգիս կարօտ է ձե՛զ, երկնաշիթեր  
Իջէ՛ք հոգւոյս մէջ, մաքրաջրէ՛ք զայն  
Երկնքի բոյրով օծէք զայն բուրեան  
Դուք մարգարիտներ երկնապարգեւ..

Յետոյ ծիածանովը ձեր շողակաթ  
Երկինք ու երկիր ծիածանէք իրար  
Փռէք եօթնագոյն երանգներ լուսէ  
Յոգիս թող հազնի զգեստն իր բեհեզ..Ե.Գ.

.....

#### ԱՐԵՂԱՎՆԵՐ ՏԵՍԱՅ ԱՆՉԱՓ

Արեգակներ տեսայ անչափ  
Որք ծագեցան սրտիս մէջ վառ  
Ինչպէս սերը որ բռնկի  
Յրաշքի նման անքննելի...  
Արեգակներ սիրաշաղախ  
Երկնեցին իմ տողս խոնարհ  
Կեանքս համակ լուսօծեցին  
Ճառագայթովն իրենց ոսկի...  
Արեգակներ դեռ հայեացքիս  
Ես կ'ողջունեմ մայրամուտն իմ  
Եւ ո՛վ գիտէ ճաճանչագեղ



---

Քանի՛ քանի՛ արշալոյսներ

Դեռ պիտ' ծագին վարդահեղեղ

Ինձ պիտ' շնորհեն պահեր լուսե

Սիրոյ, յոյսի ակնթարթներ

Արարումի բռնկումներ...Ե.Գ.

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ






## Գրական-Մշակութային

### ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ.- ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌԱՏ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԱԽՏԸ

#### ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ ԱՌՆՈՂ ԲԱՌԱՐԱՆ ՄԸ

#### Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ



2017-ի վերջերուն, Լոս Անճելըսի մէջ լոյս տեսաւ «Անհարկի յաճախակի գործածուող օտար բառերու հայերէն համարժեքներու բառարան» խորագրեալ գրքոյկ մը, որ թէւ ունի ափի մը ծաւալը, սակայն արժանի է յատուկ ուշադրութեան. լուսարձակի տակ կը բերէ ախտագին իրականութիւն մը, որ վարակած է մեր բանաւոր ու գրաւոր մամուլը, ընդհանրապէս Հայաստանի մէջ ու շարժային ալիքի մը՝ ցունամի-ի նման կ'ողողէ աշխարհով մէկ ցրուած հայութիւնը:

16x11 սմ ծաւալով գրքոյկը ունի 104 էջ եւ ներքին երկու գլխաւոր բաժին: Հեղինակներն են Տոքթ. Յակոբ Այնթապեան եւ Փրոֆ. Արտեմ Սարգսեան: Լոյս տեսած է Տէր եւ Տիկին Տոքթ. Յակոբ եւ

Լուսովիկա Այնթապեան ամուլի մեկենասութեամբ: Կողքին վրայ տեղադրուած՝ Մետրոպ Մաշտոց վարդապետին նկարը ունի յստակ թելադրականութիւն, թէ՛ պետք է հաւատարիմ մնալ մեր Մեծ Ուսուցիչին լեզուամշակութային ավանդին, թէ՛ մայրենիին հարազատ պահպանման եւ թէ դասական ուղղագրութեան վերահաստատման իմաստով: Ու եթէ կողքի լուսանկարը այս պատգամը չհասցնէ ընթերցողին, հեղինակները երկրորդ էջին վրայ տեղադրած են երկու տող. «Հայոց լեզուն անաղարտ պահենք»: «Երկու խօսք»ին մէջ նաեւ նշուած է, որ ցուցակագրուած բառերը դրուած են Հայաստանի մէջ գործածութեան ձեւով, սակայն որդեգրուած է դասական ուղղագրութիւնը. սա ինքնին այլ հնչեղ պատգամ մըն է արդէն: (Հաւանաբար ընթերցողները ծանօթ են երկու հեղինակներուն պատկերասփիւռային հաղորդումներուն, ուր երկար ատենէ ի վեր կ'արծարծեն նոյն տազնապը):

Հատորին առաջին բաժինին մէջ, այբուբենական կարգով դասաւորուած են օտար բառեր, որոնք առատօրէն կը գործածուին թերթերու, պատկերասփիւռի կայաններէ լրատուութեանց եւ առօրեայ խօսակցութեանց ընթացքին: «Երկու խօսք» խորագրեալ յառաջաբանով մը, հեղինակները կը բացատրեն, որ ընտրած են միայն սահմանափակ թիւով օտարաբանութիւններ, որոնք յաճախակի գործածութեան մէջ են. Կ'ըսեն, որ Հայաստանի մէջ լոյս տեսած են մինչեւ 15.000 օտար բառեր պարունակող բառարաններ, որոնք «գրական հայերէնի բառապաշարի մաքրագտման փոխարէն, (գ)այն ակտի եւս աղաւաղելու, օտարաբանութիւններով խճողելու գործընթացին կը նպաստեն»: Կարելի է հետեւցնել, որ յիշեալ բառարաններուն նպատակը եղած է ցուցակագրել հայերէնի մէջ գործածուող օտար բառերը, որոնք իբրեւ թէ հայերէնի մէջ որդեգրուած են, պետք է որդեգրուին: Միևնուհի, այս փոքրադիր հատորը ունի այլ յստակ նպատակ մը. ցոյց տալ, թէ



առատօրէն օգտագործուող եզրերը հայերէնի մէջ ունին իրենց համարժեք՝ գեղեցիկ բառը, բառերը, հետեւաբար, օտար եզրերու գործածութիւնը մեր լեզուի աղքատութեան պատճառով չէ, այլ հետեւանք է տգիտութեան, օտարամոլութեան եւ սեփական հարուստ մշակոյթի... դաւաճանութեան: Անմիջապէս սրճանագրենք, որ վերջին նշումները հեղինակներուն չեն պատկանիր. անոնք գործածած են անելի քաղաքավար ոճ: Անոնք արդարօրէն չեն արձանագրած նաեւ (որովհետեւ այս նշումը կապ չունի հատորին հիմնական նպատակին հետ), թէ մեր մայրենին ունի այնպիսի հարստութիւններ, բառապաշար, որուն մեծ մասը «թաղուած» են բառարաններու սիւնակներուն, ընդհանրապէս արեւ չեն տեսներ եւ կարգ մը «հեղինակաւոր» անձնաւորութիւններ օր մըն ալ հրապարակ կու գան «գիւտերով», յայտարարելով որ հայերէնը աղքատ լեզու է, պէտք է հարստացուի օտար բառերու ներածումով: (Այս երեւոյթին կ'անդրադառնանք քիչ ետք):

Բառարանի բաժինը կը գրաւէ 64 էջ, այսինքն՝ գրքոյկին երեք-հինգերորդը: Երկրորդ բաժինը կազմուած է հայկական անուններու ցանկերով, քաղուած՝ ազգային առաջնորդարաններու հրատարակութիւններէն: Իրերայաջորդ ցուցակներով տրուած են արական եւ իգական անուններու ցանկեր, որոնց սկզբնաւորութեան, նմանապէս քաղաքավար ոճով կոչեր կան ծնողներուն, որպէսզի նորածինները օժտուին հայկական անուններով: Կը նշուի, թէ ցանկերուն մէջ կան հայկական կամ (պատմականօրէն) հայացած-նուիրականացած անուններ. այդ անուններուն շարքին են սուրբ գրային դէմքերու անունները, որոնք յամենայնդէպս կը պատկանին միջազգային անձնանուններու ցուցակին: Ընթերցողը պիտի նկատէ, որ այդ ցանկերուն մէջ կան «հինգած» անուններ, ինչպէս՝ Անակ, Նոյ, Սանատրուկ, Կիւզարդ, Շամիրամ եւ այլն, որոնք ընդհանրապէս գործածութենէ դուրս ինկած են մեր օրերուն, սակայն նաեւ կան բիւրեղի պէս վճիտ ու փայլուն անուններ, որոնց գոյութիւնն իսկ մոռացութեան տրուած է մեր ժողովուրդին կողմէ: Օրինակի համար, Բակուր (կը յիշեցնէ Դանիէլ Վարուժանի մէկ առասպելաշունչ բանաստեղծութիւնը), Նորայգ, Շարա (յիշենք մեր նշանաւոր երգիչը՝ Տալեանը, եւ ո՛չ անպայման Հայկի ծոռներէն՝ շատակեր շիրակցին), Ժպտուհի, Հայարփի եւ այլ լուսաշող անուններ: «Հինգած» անունները հաւանաբար պէտք է ընկալել առ ի գիտութիւն:

\*\*\*

Օտարաբանութիւններու գործածութիւնը նոր ախտ մը, նոր ցաւ մը չէ մեր ժողովուրդին ու գրականութեան մէջ: Գրաբարէն դէպի ժողովրդական բարբառներ անցումի դարաշրջաններէն ի վեր, այս երեւոյթը ներկայ է մեր գրականութեան ու խօսակցական լեզուին մէջ. իսկ եթէ աչքի առջեւ ունենանք նորագոյն շրջանը, որ կը սկսի Խաչատուր Աբովեանով ու կը կտրէ Չարթօնքէն մինչեւ խորհրդային տարիներու եւ սփիւռքացումի փուլերը, ներառեալ Պոլիսն ու Թիֆլիսը, օտար եզրերու գործածութիւնը «բնական» ընթացք եղած է տասնամեակներ շարունակ: Սա անելի՛ շեշտուած է արեւելեան կողմն աշխարհի, սակայն մեր արեւմտեան պուրակներուն մէջ ալ արժանացած է Պարոնեանի սուր քննադատութեան: Արեւմտահայ գրողներ ընդհանրապէս խուսափած են օտարաբանութենէ (ժողովրդային խօսակցութիւնը՝ նուազ չափով), օտար եզրեր գործած են խօսակցութիւն մը իր բնական հարազատութեամբ ներկայացնելու միտումով, մինչդեռ մեր աշուղներն ու Չարենցի նման համբաւաւոր գրողներ իրենց սեփական լեզուին մէջ ներառած են առատ օտարաբանութիւններ: Բացատրութիւնները բազմաթիւ են, սակայն արդարացումի փորձերը կը մնան սնանկ:



Իսկ երբ կը հասնինք մեր օրերուն, երբ ունինք վերանկախացած հայրենիք, ուր կան լեզուական կաճառ, մշակոյթի ու կրթութեան նախարարութիւններ, կան պատկերասփիւռի բազմաթիւ կայաններ, պարբերականներու առատութիւն (չենք ուզեր խօսիլ դիմատետրեան գրառումներու մասին, որոնք այլապէս նոր ծաւալ կու տան աղետալի կացութեան), ողբերգութիւնը կը դառնայ աւելի ծանրակշիռ: Նախագահէն ու վարչապետէն սկսեալ, մինչեւ նախարարներ, ազգային ժողովի անդամներ, պատկերասփիւռի խօսնակներ, արուեստագետներ, անգամ լեզուագետներ, գրողներ ու հոգեւորականներ անձնատուր եղած են այս ախտին (կրկնենք նաեւ «յարգելի բացառութիւններ» յանկերզը): Այս ախտի դարմանման բազմաձայն հրաւերներուն կողքին, անտեսումի ու արհամարհանքի ենթակայ կը մնան նաեւ դասական ուղղագրութեան վերահաստատման կոչերն ու ճիգերը, պատրուակելով, որ նման քայլ «անկարելի է, հսկայական ճիգի կը կարօտի»: Չենք անդրադառնար, որ մօտաւորապէս դար մը առաջ, յստակ դաւադրութեան մը հետեւանքով ու մեր ժողովուրդը բաժանումի մատնելու բացայայտ նպատակով որդեգրուած սխալագրութիւնը հազիւ 20 տարի ետք ցոյց տուած էր իր սնանկութիւնը, անոր ստեղծած դժուարութիւնները բացայայտուած էին ցաւցնող կերպով, զայն որդեգրողները քաջութիւնն ու կամքը ունեցած էին կէս ետդարձ մը կատարելու դէպի անանդական ուղղագրութիւն, առանց իրենք զիրենք խաբելու, որ նման քայլ «անկարելի էր եւ վիթխարի աշխատանք կը պահանջէր»: Տեղ մը իմաստութիւնը գերակշռած էր...: Հիմա, օտարաբանութեանց սանձարձակ գործածութիւնը շուքի մէջ կը ձգէ ուղղագրութեան հարցը, որ սակայն նոյնքան հրամայական է ու ազնիւ մարտահրաւեր: Երկուքին ալ պարագային, պետք է գոյացնել կամքն ու հեռուն տեսնելու կարողութիւնը (նոյնքան սնանկ է այն տրամաբանութիւնը, որ Սփիւռքը վաղը-միւս օր պիտի հալի-մաշի, Հայաստանէն արտագաղթողները «տիրապետութիւն» պիտի հաստատեն, հարցը ինքնաբերաբար լուծում պիտի գտնէ. ուրեմն, ինչո՞ւ ճզնիլ եւ ուժ սպառել):

Ահա թէ ո՛ր պետք է փնտռել նման փոքրակազմ հատորներու արժէքը, ինչպիսի՛ պատգամներ պետք է քաղել անկէ: Կ'արժէ, որ անկէ օրինակներ տրամադրուին Հայաստանի պետական այրերուն, մամուլի մարդոց, գրողներու, ինչո՞ւ չէ նաեւ արտերկրի մէջ գրիչ շարժողներու ու պատկերասփիւռներէն երեւցողներու, որոնք ինկած են վերը յիշուած շարժային ալիքի ազդեցութեան տակ: Հեղինակները ունին նաեւ պարզունակ (ո՛չ պարզապիտ) առաջարկ մը. օրական միայն տասը օտար բառի հայերէն եզրը սորվիլ ու քանի մը ամիսէն դարմանել հիւանդութեան մեծագոյն բաժինը:

Ուղղագրութեան պարագան աւելի վճռահատող կեցուածք կը պահանջէ, որովհետեւ անցնող իւրաքանչիւր օր, շաբաթ, տարի՝ մեզ հաւաքաբար պիտի հեռացնէ բաղձալի դարմանումէն, միեւնոյն «լեզուն» որդեգրելու ընտրանքէն:

Արձանագրենք վերջին կէտ մըն ալ. երբ որեւէ լեզուի մէջ որոշ նիւթ մը, գաղափար մը զինք արտայայտող-բացատրող եզր մը չունի, հարցը կը լուծուի երկու ձեւով. կամ կը ստեղծուի զայն բացատրող յարմարագոյն նոր բառ մը (անձնական փորձառութեամբ կրնանք ըսել, որ հայերէնի բառամթերքին մէջ «սղաճ-ուճ» բառը շուրջ 35 տարուան կեանք ունի, նախապէս կը գործածուէր Էնֆլասիոն-ինֆլէյշըն օտարաբանութիւնը, մինչդէռ այսօր «սղաճ»ը ընթացիկ բառ է ամէն տեղ, ու սա միակ նոր բառը չէ), կամ ալ օտար եզր մը կը պատշաճեցուի հայերէն համապատասխան եզրով մը. այսպէս եղած է պատմութեան ընթացքին, եւ ո՛չ միայն հայերէնի պարագային (ո՛վ չի գիտեր, որ ֆրանսերէնի կամ անգլերէնի բառամթերքները ինչպիսի՛ տարողութեամբ հարստացած են լատիներէնէն ու



---

յունարէնէն): Մեր նշանաւոր բառարանագիրները՝ Աճառեան եւ ուրիշներ, արձանագրած են թէ մեր բառամթերքին մէջ պարսկերէնէ, արաբերէնէ կամ այլ լեզուներէ ինչպիսի ներածումներ կատարուած ու հայացուած են: Սա ամօթալի երեւոյթ չէ: Տակաւին, Յայաստանի մէջ, խորհրդային վերջին տարիներուն, գիտնականներ ու լեզուագետներ գլուխ յոգնեցուցին եւ թուաբանական, գիտական եւ այլ ոլորտներու մէջ նոր բառերու համապատասխան հայերէն եզրեր ստեղծեցին: Հեռաւոր ու մօտիկ անցեալի նման որդեգրումներ նպատակադրած են մեր լեզուին հարստացումն ու պահպանումը, սակայն միշտ հաւատարիմ մնալով այն սկզբունքին, որ հայերէնի մէջ որոշ նիւթի մը կամ գաղափարի մը համապատասխան բառ գոյութիւն չունէր:

Այս բառարանին նպատակը, կրկնենք, յիշեցնել է, որ հայերէնը ունի՝ հարուստ բառամթերք, հետեւաբար, պէտք չունինք օտար լեզուներէն բառեր մուրալու: Ամօթ է:

## Գրական-Մշակութային

### ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

### ՅԱԻԵՐԺԱՀՈՒՆՉ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Հակիրճ ակնարկ՝ ծննդեան 140-ամեակին առիթով)

### Գրեց՝ ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ



«Վահան Թեքեանով՝ կը զգաստանանք»:

Յ. Օշական

Այս հաստատումը կը բնորոշէ բանաստեղծութեան ինքնութիւնը:

Արդարեւ, «բանաստեղծութիւն»-ը անվերծանելի այն խորհուրդն է, որ իր բխումը կը ստանայ Մարդ Էակի խորախորհուրդ հոգեվիճակէն: Մերթ խաղաղ է ան, նման մշտադալար բնութեան մեզի պարզեւած խորագոյն ապրումներուն, ու մերթ՝ մեր ներքին տագնապներէն ծնունդ առնող յուզական եւ իմացական

խռովքներուն:

Յ. Օշական երբ կը վերլուծէ Բանաստեղծին ստեղծագործութիւնը, շատ զգոյշ կը վերաբերի իր ընտրած բառերուն նկատմամբ: ԻՐԱԲ բառը, որ բոլորիս կողմէ կը գործածուի իր պարզագոյն իմաստով, իր մօտ բարձրագոյն որակումն է, զոր կ'ընծայէ Թեքեանի քերթողութեան եւ որու ընթերցումէն կը զգաստանայ ընթերցողը: Կա՞յ արդեօք ուրիշ բառ մը, որ պիտի կարենար փոխարինել բանաստեղծութենէն մեզի փոխանցուող գրական - գեղագիտական այն հաճոյքը եւ որուն ընկալումը կը հանդիսանայ բարձրակետը ընթերցողին ներաշխարհային հարստութեան:

Յ. Օշական 1945-ի սկիզբին երբ գրի կ'առնէր Թեքեանին նուիրած «Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծութիւնը» մենագրութիւնը, տակաւին անաւարտ՝ Ապրիլ 4-ին, Գահիրէի մէջ 67-ամեայ բանաստեղծը իր «մէկ հատիկ»-ն ալ կը փակէր ընդմիջտ այս աշխարհին: Յանկարծ կանգ կ'առնէ Օշական եւ նոր՝ Դ. եւ Ե. գոյգ ենթաբաժանումներով կ'ամբողջացնէ իր երկը, սկսելով հետեւեալ նախադասութեամբ.

«Այս գրքոյկը նոր էր անարտած,

Երբ... վարագոյրը իջաւ»:

Գիրքը լոյս կը տեսնէ նոյն տարին, որ կ'ըլլայ Թեքեանի քերթողութեան նուիրուած գրականագիտական առաջին վկայութիւնը, իր խորքով՝ ցարդ անկրկնելի:

Արդարեւ, եթէ Թեքեան ի կենդանութեան ամբողջապէս ու լիարժէք խորքով չէր կրցած վայելել իր երկերուն արդար գնահատանքն ու «հասկցուած ըլլալու» գոհունակութիւնը, սակայն յետմահու, իր թողած գրական ժառանգութիւնը գրեթէ լիովին եղաւ առարկան թէ՛



մտաւորականութեան եւ նոյնքան՝ գրասեր ընթերցող հասարակութեան: Յարո, տասնեակէ մը ակտիւ լոյս տեսան հատընտիր հատորներ եւ ուսումնասիրութիւններ, որոնք իր ժողովուրդին մօտեցուցին արուեստագետ բանաստեղծն ու արձակագիրը, խմբագիրն ու հրատարակագիրը, ուսուցիչն ու գաղափարախօսը, հասարակական ու հայ մշակոյթի գործիչը:

Այժմ կը մնայ գիտական խորքով պատրաստուած ամբողջական երկերու ակադեմական հրատարակութիւնը՝ որուն արժանի է Վահան Թեքեան Մարդն ու Բանաստեղծը:

Քիչերն են որ պիտի մնան իրենց բարձունքին վրայ:

Թեքեանի գեղարուեստական ստեղծագործութիւնը կը պատկանի այդ «քիչ»-երուն վերապահուած մեկաշնորհին:

Որովհետեւ, իր մօտ՝ քերթուածը առաւելաբար «կեանքէ կեանք» գացող ապրուած յոյզն ու ճաշակուած դառնութիւնն է տառապանքին: Այդտեղ՝ Մտածում եւ Չգացում հաւասարազօր բաղադրատարրերն են բանաստեղծին ներքին աշխարհին, խորապէս ներդաշնակ, ջինջ ու պարզ, ու նաեւ ճարտարապետուած՝ խորունկէն ե- կող իր արմատներով:

Իր քերթուածները ազատագրուած են ժամանակի նեղ սահմանափակումէն, նոյնիսկ եթէ անոնք բանաստեղծականացուած վերարտադրութիւնն են ժամանակի ոգիին, մեր համայնական ապրումներուն եւ հաւաքական յիշողութեան:

Արդ, ո՞ր է գաղտնիքը:

Պիտի ըսենք՝ բան-ա-ստեղծումին մէջ: Անխաճն եւ իրաւ:

Անհունօրէն իր խորունկ ցանն ու ցասումը, արդարօրէն՝ բայց անկրկնելի զսպուածութեամբ մը արտայայտել կարենալու մէջ կը կայանայ այն՝ որ պիտի զանազաներ ոտանաւորը քերթուածէն:

«Յոգեր» (1901) հատորը, իբրեւ անդրանիկ բխում, խոստմնալից սկիզբ մը համարուեցաւ ժամանակակից քննադատ միտքին կողմէ: Սակայն, անմիջապէս ետք այդ թուականէն, Թեքեանի ներաշխարհին մէջ կեանքի կոչուեցաւ հրաշալի յարութիւն մը: Տասնամեակ մը բաւարար եղաւ, որ ան դարձներ անկարելին՝ կարելի: 1914-ին հրատարակուած էր իր երկրորդ քերթողագիրքը, համանուն հրաշքը իբրեւ խորագիր կ'ընդունէր ու կը մեկտեղէր մեծագոյն մասը իր ցանուցիւր քերթուածներուն, թիւով՝ շուրջ 150: Գիրք մը՝ արդարօրէն իր տեղն ու դիրքը նուաճող «Յեղին սիրտը»-ի եւ «Յեթանոս երգեր»-ու հեղինակին կողքին, զուգահեռաբար՝ Մեծարենցին ու Սիամանթոյին:

Ու պատահեցաւ նաեւ այլ հրաշք մը (Երուսաղէմի Հայոց պատրիարքարանէն եկած հրաւերը), որ զինք փրկեց Յեղասպանութեան զոհը դառնալու վերահաս վտանգէն: Մնաց կենդանի՝ երգելու փառքն ու արհաւիրքը անցեալի, ներկայի շուարումն ու ապագայի տեսիլքը... եւ Արիւնը ազգին... վասն մեր եւ բազմաց:

«Կես գիշերէն մինչեւ արշալոյս»-ը, «Սէր»-ը, «Հայերգութիւն»-ն ու «Տաղարան»-ը մեզի կու գան իբրեւ վկայութիւնը եղեռնապատումին եւ նորակազմ Սփիւռքին, որուն համար կը դողար իր հոգին:



Թեքեանի քերթողութիւնը կը պատկանի որքան հայ ժողովուրդին, նոյնքան եւ համայն մարդկութեան ազնիւ հոգիներուն:

Եղեռնի յուշ-քանդակներով ստեղծագործուած իր քերթուածները, վեր են, շատ վեր՝ միայն մեր ժողովուրդին ցաւն ու ցասումը արտայայտող կտորներ ըլլալէ, այլեւ կը պատկանին հանուր մարդկութեան: Համամարդկային ազնուագոյն գաղափարներուն շեշտադրումն են նաեւ՝ խոհական էջերը իր չափածոյ տաղերուն, որոնք ունին Ապրումին եւ Յղացքին կենարար միասնութիւնը:

Կա՛յ աւելի վսեմը այն բնութագրումին, քան՝ «Եկեղեցին հայկական», «Հաշուեյարդար», «Բարձրացում» կամ «Երբ օրը գայ վերջապէս» քերթուածներուն եւ անոնց բազմատասնեակ նմաններուն մէջ տեղ գտած հոգիի եւ միտքի հաւասարագոր արտայայտութիւնը... որ մեր իւրաքանչիւր ընթերցումէն ետք մեզի կը վերադառնայ առաւել անուշցած ու զօրացած, մեր հոգիին մէջ մնալու յաւիտեան: Թեքեանի կենդանութեան լոյս տեսած հատորներէն դուրս կը մնայ այլ քերթուած մը, որ հրապարակուեցաւ իր «Ամբողջական երկեր» յետմահուան հանրութեան ներկայացուած հատորներու շարքին: Այդ բանաստեղծութեամբ կ'ուզեմ փակել այս հակիրճ ակնարկը, զոր կը նուիրեմ Թեքեանի համամարդկային քերթողութեան.

«Գիտեմ գաղտնիք մ'ահաւոր.-

Այս Աստուածն է սուտ Աստուած

Մ'որ խաբած է մարդը միշտ, եւ

մարդը զինք է խաբած...»

Եւ անոր շարունակութեան մէջ՝

«Պիտի մեռնի՛ այս Աստուած

այս մարդուն հետ գիրկընդիխառն,

Որ բուն Աստուածն՝ աքսորուած

սրտէն, մտքէն իր զակին՝

Վերադառնայ ու կազմէ նորէն

անոր նոր հոգին»:

Իսկ մա՛րդը...

«Պիտի մեռնի մարդը այս –

հրճուանքս է մեծ թէեւ դառն–

Իր գործերովը բոլոր,

ու պիտի նոր մարդը ծնի

Բանաստեղծի մը թերեւս



---

երգէն սիրոյ, ցասումի...»:

Այս է կտակը բանաստեղծին:

Աշխարհը ղեկավարող ուժերու մօտ, յանուն եւ վասն Աստուծոյ, 20-րդ դարուն ամբողջ տեւողութեան աւելի քան 100 միլիոն մարդկային զոհերու, պիտի մեռնի անպայման Չարիքի աստուածը, որպէսզի «նոր Մարդը ծնի՝ բանաստեղծի մը թերեւս երգէն սիրոյ, ցասումի» եւ անոր երգերուն ընդմէջէն ծնի հաւաքական գիտակցութեան նոր Աստուածը, համամարդկային իմաստասիրութեամբ գերագոյն ուժը, որ մշտագոյ, անսկիզբ եւ անվախճան մեծատառ ՍԷՐՆ Է: ԲԱՆՆ Աստուծոյ:

«Միմիայն այս, մընացեալն

ամբողջ պատրանք է...

եւ գուցէ Անոր երբեք չհասնինք:

Անոր իղձովը մեռնինք...»:

Կը վերադառնամ Թէքէեանի գիտակցական կեանքի յիսնամեայ շրջանին... որ խառնուրդն էր հողեղէնի եւ ոգեղէնի, եւ իբրեւ մշտական ներկայութիւն՝ ան կը մնայ մեզի հետ այսօր, եւ նոյնքան, առաւել եւս ներկայ 21-րդ դարու համամարդկային եղբայրութեան եւ սիրոյ ռահվիրայ բանաստեղծը: Անոր քերթողութիւնը պարզ է, բայց խորունկ: Իր տողերը մուփին մէջ լոյսը շողացնող ճաճանչներ են, մերթ՝ լճացած զգացումներու շարժում ու գրգիռ շնորհող, հոգիները ալեկոծող միւսչեւ հոգեյատակը մեր զգայնութեանց, ու մերթ՝ ալեկոծեալ ու խռովեալ հոգիներուն խաղաղութիւն ներշնչող ԲԱՆԻ արարում:

Թերեւս վաղուան սերունդները պիտի գան լաւագոյնս մեկնաբանելու խորհուրդը Թէքէեան հայերգակ ու մարդերգակ բանաստեղծին:

Յաւերժութեան ուղեւորն է ան, մեզմէ հեռու՝ մեզի հետ, որպէսզի միշտ յիշենք իր հոգին, «որ դողաց վասն [մեր] եւ բազմաց...»:





## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Բերք ու բարիք սերմանողը անպայմանօրէն կը վարձատրուի, երբեմն նոյնիսկ հազարապատիկ...անով իմաստաւորուած տեսնելով իր գնայուն կեանքը, անով բաւարարուած զգալով ներքնապէս...Բերքն ու բարիքը անպայմանօրէն կու տան իրենց պտուղները, որոնց ի տես՝ սերմացանը կը

զգայ, որ ի զուր չէ անցած իր կեանքի ժամանակը, որ ամենէն թանկագին բանն է որ ունինք եւ զոր յաճախ կը վատնենք «պարապ վախտի խաղալիք»ներու վրայ, որոնք կը մնան ապարդիւն, անպտուղ, սրտի կսկիծ ալ պատճառելով՝ գիտակից թէ անգիտակից...Սա չէ՞ Էապէս մարդ արարածի կեանքի բուն առաքելութիւնը, իւրաքանչիւրս մեր չափով, մեր կարելիութեամբ՝ սերմանել բարին եւ աւելցնել, շատցնել զայն...

.....

Առանց յոգնութեան, առանց աշխատանքի ձեռքբերուածը Էապէս ԱՐԺԷԶ չունենար...դիւրութեամբ եկածը՝ դիւրութեամբ ալ կ'երթայ: Այդպէս է որ շատեր այնքան հեշտութեամբ կը մսխեն ան ինչ հարստութիւնը, զոր ժառանգած են եւ որուն համար ոչ մէկ կաթիլ քրտինք են թափած...: Դժուար աշխատանքով, մաքառումով ձեռքբերուածը համապատասխան արժէք կ'ունենայ...

.....

Այնքան դժուար է երբեմն ճիշդ տարանջատել լաւը՝ վատէն, ճշմարիտը՝ սուտէն թէ կեղծիքէն, որ այնքան լաւ շպարուած կ'ըլլայ «ճշմարիտ»ի հանդերձանքով, որ պահ մը շփոթութեան կրնայ մատնել քեզ...Մեր ժամանակներուն յատկապէս, երբ հրապարակը ողողուած է դիմակներու ետին թաքնուած ճարպիկ կեղծարարներով, որոնք պատրաստ են ամէն լկտիութեան, իրենց «օրակարգը» յառաջ տանելու համար...Ներքին ձայնը, սակայն, սիրտը կրնայ անվրէպ վկայել, թէ ո՞վ է ճշմարիտը եւ ո՞վ է սուտը...Պիտի ապաւինինք անոր ուղեցոյցին....

.....

Բռնակալութիւն կամ բացարձակ իշխանութիւն հաստատելու ամենէն ազդու միջոցը նկատուած էր, դարեր ու հազարամեակներ առաջ, բոլոր համաքաղաքացիները կամ իշխանութեան տակ գտնուողները համահարթեցնել, ոչնչացնելով այն հազուագիւտ անձերը, որոնք վեր էին կանգնած միջակութենէն...Հիմա ալ, նոյնը չէ՞ քիչ մը ամէն տեղ...Միջակութիւնները ամէն տեղ դիրքերու եւ հրապարակի վրայ կ'ըլլան, իսկ հոգեմտաւոր յատուկ որակ ունեցող անհատականութիւնները կը հեռացուին, կը չեզոքացուին, կը լուսանցքայնացուին...: Պարզապէս, կիրառուած մեթոտը աւելի նուրբ է եւ մշակուած, քան ինչ որ էր դարեր եւ հազարամեակներ առաջ....

.....



Գործնական եւ գործնապաշտ մտայնութիւնը մարդը տակաւ կը հեռացնէ հոգեւորէն ու հոգեկան արժէքներէն...Հաշիւը կը ներխուժէ իր բոլոր գոեհկուրթիւններով, իր սակարկութեամբ, առօրեայ տաղտկալի իրականութեամբ, գրպանային մտածողութեան թելադրած եւ պարտադրած չարժէքներով, սուտ ու կեղծիքով, մարդը տակաւ կը դառնայ Նիւթապաշտ եւ օգտապաշտ, հոգեզուրկ եւ անհոգի...

.....

Չգացումի թէ զգացումներու հեղեղը եթէ կարենանք յաղթահարել, կը լսենք բանականութեան վճիտ ձայնը, որ նաեւ հոգիի բիւրեղեայ ձայնն է՝ ամէնօրեայ դաժան իրադարձութեանց ետին թաքնուած, որ ուղեցոյց է կեանքի ճանապարհի...Եթէ կարենանք զայն տարանջատել շրջապատի խժալուր աղմուկէն...

.....

Ազգային մեր ցաւերէն կամ դժբախտութիւններէն մէկն ալ ա՛յն է, որ քիչ անգամ պատահած է որ մտածող տարրը եղած ըլլայ հայ կեանքի ղեկավարներու շարքին մէջ...Մեծաւ մասամբ միջակութիւն համարուող աթոռապաշտներ կառչած են իրենց աթոռներուն, այնտեղ գտնելով իրենց փոքր ես-երը շոյուած զգալու, կամ շահերը բաւարարուած տեսնելու եզակի առիթը...: Յանուն այդ եզակի առիթի յարատեւման, շատ անգամ անոնք զոհած են ազգային շահ ու արժանապատուութիւն...: Կունենալով աթոռէն հրաժարելու քաջութիւնն ու անշահախնդիր ազգասիրութիւնը...: Հայ հանրութիւնը թերեւս նոնքան պատասխանատու է իրերու այս դրութեան համար, համակերպած ըլլալով անոր...: Ճիշդ պիտի ըլլար նշել՝ ըսէ՛ ո՛վ է ղեկավարդ, ըսեմ ո՛վ ես դուն....

.....

Ամէն անգամ որ կ'անտեսենք արժանաւորը, մտքի, հոգիի իր լոյսը անմնացորդ բոլորին սփռող անձը, անձերը, վաստակաշատ մտաւորականը կամ նուիրեալը, ամէն անգամ որ փառք ու պատիւ կ'ընծայենք լոկ հարուստին, պոռոտախօս ինքնագովանին, որ Աբիսողոմ աղայի նորօրեայ կերպարն է մեր մէջ...: Ինքնք մեր ընտրութեամբ եւ մեր պատասխանատուութեամբ ստուերի տակ կը թողունք մեր շրջապատի, համայնքի, հայ իրականութեան հոգեմտաւոր արժէքները, հոգիի եւ ոգիի մթնոլորտը...: Ի խոնարհումն Նիւթին, դրամին, ցուցամոլութեան եւ գոռոզամտութեան...

.....

Անհայրենիք, անազգ եւ անընտանիք ամբօխ մը, կամ խառնամբօխ մը կը միտի կեանքի կոչել ներկայ աշխարհի «քաղաքակրթութիւն»ը, անդեմ, անդիմագիծ, ուղեմոլոր, «Ուր հաց, հոն կ'ա՛ց» մտայնութեամբ, ուր տակաւ կը խախտուին ու կը խզուին՝ մարդ-ընտանիք, մարդ-հայրենիք, մարդ-տիեզերք, մարդ-Արարիչ Էական կապերը...: Եւր ապրուստ ապահովելու համար, մարդը կը քաջալերուի նոյնիսկ ապրանքի վերածելու եւ վաճառելու իր մարմնին մասերը, որպէսզի կարենայ ապրիլ...: Ահաւոր է...

.....

Դարուս փիլիսոփայութիւնը կամ մտայնութիւնը կ'արհամարհէ ոգին...կարծէք ամէն ինչ օգուտ քաղելու, գործնական նպատակ հետապնդելու, շահ ու մակերեսային հաճոյք



ստանալու համար ըլլար....Բայց ի՞նչ օգուտ կամ գործնական նպատակ կրնայ ունենալ գեղեցիկը....Ի՞նչ շահ կրնայ տալ բարին....Ի՞նչ հաճոյք կրնանք ստանալ ճշմարիտէն....Մարդ Էակը այսքան չէր ստորնացած, անոր կեանքին նպատակը այսքան չէր նսեմացած....Ոգին անտեսելով, մարդը կը վերածուի սոսկ հաշուիչ մեքենայի, ուսել-խմելու համար ապրող եւ թեթեւ հաճոյքներով սնանող անասունի....Գուցէ սա չէ՞ ներկայ մարդուն ապրած հոգեկան անձկութեան բուն պատճառը....Ոգիի բացակայութիւնը...

.....

Երանի կարենայինք ճիշդ դիտել եւ դատել մեր շուրջ տեղի ունեցող շրջադարձային իրադարձութիւնները....կարենայինք մեզի հրամցուած քարոզչական բնոյթի տեղեկատուութենէն անդին տեսնել, մեր նայուածքը յառելով մակերեսէն դէպի խորքը ....կիսաճշմարտութիւններէն դէպի ճշմարիտը...պատրանքներէն դէպի իրականութիւնը....երեւոյթէն դէպի իսկականը..: Բայց մեր պատմական հարուստ փորձը, անկէ քաղուած դասերը կրնան մեզ իմաստութիւն պարգեւել, բացի եթէ կամովին կոյր նախընտրենք ըլլալ....

.....

Եթէ անհատ մը թէ ժողովուրդ մը կ'ապրի գերազանցօրէն ձեւականութեամբ, ցուցադրականութեամբ, քաղքենիամտութեամբ....եւ նման այլ մակերեսային աշխարհայեացքով եւ վարքագիծով, յայնժամ դատապարտուած կ'ըլլայ ան կորսնցնելու Էականն ու խորքայինը...

.....

Եւրոպական արժէքներ, օրէնքներ, ապրելակերպ....շատ քաղցր կը թուին ըլլալ առաջին հայեացքով....տակաւ կը հասկնաս որ անոնք միտուած են դրամատերին շահերը պաշտպանելու, ազգային աւանդական արժէքները ջնջելու, նոյն սիւթապաշտ, օգտապաշտ համահարթեցնող ապրելակերպը պարտադրելու «ազատօրէն» բոլորին: Մեր բարոյական, ազգային մտածելակերպը եւ աշխարհայեացքը անյարիր են Եւրոպայի դաւանած շատ մը «արժէք»ներուն եւ «իրաւունք»ներուն: Բայց մենք կը սիրենք ի՞նչ որ օտարինն Է եւ կը ստորագնահատենք հայկականը՝ կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ...

.....

Օտարամերժ չենք, բայց իրարամերժ ենք....Չենք ընդունիր մէկ այլ հայը, որ թերեւս ըլլայ մեզմէ աւելի արժանաւոր, փորձառու, իմաստուն, նուիրեալը ազգային կեանքին...Միշտ մենք ենք աւելի լաւը, աւելի կարողը, աւելի նուիրեալը....եւ կը փորձենք շատ յաճախ մեր գերակայութիւնը հաստատել՝ ուրիշը կամ ուրիշները վարկաբեկելով, անոնց վաստակը նսեմացնելով, զանոնք նոյնիսկ առ ոչինչ համարելով...Եւ տեղ չենք հասնիր այս ախտին պատճառով գերազանցօրէն....

.....

Ի՞նչ որ ալ պատահի, չկորսնցնել հոգիի լոյսը ...ներքին այդ լուսաւոր խորհուրդը, որ ամենէն դժուար ու դաժան պահուն անգամ՝ յոյս կը ներշնչէ, կայծ կու տայ սրտիդ, չի ձգեր որ յուսալքութեան գիրկն իյնաս....Յուշարարն Է ան թերեւս այն բերկրանքին, զոր կեանք



---

Կ'անուանենք, առանց խորանալու անոր իմաստի խորախորհուրդ շերտերուն մէջ....Կեանքը գերագոյն պարգէն է Արարիչին մեզի տրուած....եւ մեզմէ կախեալ չէ՝ գերագանցօրէն՝ զայն իմաստաւորելն ու արժեւորելը....: Եթէ զգայարանքներդ չեն բթացած, եթէ անոնք կը զգան բնութեան ձայները, բոյրերն ու թոյրերը, երկնքի անհունութենէն մինչեւ արեւին ոսկեշող փայլն ու աստղերու բոցկլտանքը....խոտի ու ծաղկի բուրմունքն ու զմայլելի գեղեցկութիւնը....մանկան ճիչն ու զուարթուն հայեացքը....Կ'ապրիս յայնժամ կեանքի հրաշք-խորհուրդը, կ'ըմպես անոր երանութիւնը, որուն հաւասար ոչինչ կայ այս աշխարհիս վրայ....որքան ալ քեզ հմայեն իրերու շքեղութիւնն ու պերճանքը....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Թէ հեռանայ, կը քաղցրանայ  
Սիրոյ յուշը երգ մը դառնայ  
Մեղեդի մը հոգեպարար  
Որ կախարդէ հոգիդ համակ...

.....

Թէ որ ուզեն՝ սեւին սպիտակ  
Սպիտակին՝ սեւ, կ'ըսեն ոմանք  
Որոնց համար շահն սեփական  
Գերիվեր է քան լոյսն արդար...

.....

Պատռուակներ դուն մի փնտռեր  
Սխալներուդ համար, անգի՛ն,  
Սխալիդ տէ՛րն դուն միշտ եղիր  
Որ դաս առնես, զայն չկրկնես...

.....

Սրտիդ զարկին ականջ դի՛ր դուն  
Ճշմարիտը հոն է թաքնուած  
Մի փնտռեր զայն այլուր ի զուր  
Խառնաշփոթ է այլ ամէն բան...



.....

Մենք հերոսներուն արժանի չեղանք  
Անոնք իրենց կեանքն միշտ մատաղ ըրին  
Յանուն հայրենեաց, կեանքին մեր ազատ  
Մենք խուլ մնացինք իրենց հառաչին...

.....

Ականջ մի՛ կախեր այլոց խօսքերուն  
Այսօր կը գովեն, վաղը կ'ուրանան  
Դուն խղճիդ միայն հաշիւ պիտի տաս  
Թող սիրտդ միայն մնայ միշտ ցնծուն...

.....

Ողորմելիներ, բազմած աթոռին  
Աղքատ հոգիով, միտքով, սիրտով ալ  
Դուք ոչինչ ունիք ձեր աթոռէն զատ  
Չքաւոր անչափ, գութի արժանի...

.....

Անցեալի փառքը անցեալին մնայ  
Եթէ չէ աւիշ նորի արարման  
Անցեալի փառքով թէ բաւարարուիս  
Անցեալիդ բանտին կը մնաս բանտուած...

.....

Տարիներդ դուն մի՛ չափեր  
Ժամացոյցի բուր սլաքով  
Այլ լոկ այն լոյս ակնթարթով  
Որ սրտիդ զարկն արժեւորեց...

.....

Որքան սուգուիս հոգիիդ մէջ  
Տարածուիս դուն տիեզերքի մէջ



---

Քանզի հոգին տիեզերք մըն է

Չայն հոգւոյդ մէջ դուն կը գտնես...

.....

Կեանքը որպէս մի ակնթարթ

Պիտի երթայ ու շուտ անցնի

Գուցէ որպէս լոկ յուշ մնայ

Յիշողութեան մէջ տիեզերքի...

.....

Կեանքին մէջ շատ են վերքեր ու ցաւեր

Բայց ինչո՞ւ ըլլալ լոկ եղերամայր

Չտեսնել լոյսը որ կայ ամէնուրեք

Անով ողողել սիրտը ցաւատանջ...

.....

Պատռուակներ դուն մի փնտռեր

Սխալներուդ համար, անգի՛ն,

Սխալիդ տէ՛րն դուն միշտ եղիր

Որ դաս առնես, չկրկնես զայն...

.....

Սրտիդ զարկին ականջ դի՛ր դուն

Ճշմարիտը հոն է թաքնուած

Մի՛ փնտռեր զայն այլուր ի զուր

Խառնաշփոթ է այլ ամէն բան...

.....

Ցաւդ ներքին քեզի պահէ

Չայն մի՛ բաժներ ուրիշի հետ

Եթէ բաժնես, յետոյ զղջաս

Ոչ ոք կրնայ քեզ հասկնալ....

.....



---

Մի՛ ճնշեր մտքիդ որ միտք յղանայ

Մի՛ ճնշեր սրտիդ որ բռնի սիրէ

Միտքն ու սիրտը ազատ կը գործեն

Գաղտնի ճամբայով որ ինքնեկ կ'ըլլայ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ